ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԶԵԿՈՒՅՑ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ -2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ.....2
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ.....3
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....3
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....7
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....11
ՁԱՓԱՆԻՇ 1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....11
ՁԱՓԱՆԻՇ 2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՁԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....15
ՁԱՓԱՆԻՇ 3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....21
ՁԱՓԱՆԻՇ 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.....26
ՁԱՓԱՆԻՇ 5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ..31
ՁԱՓԱՆԻՇ 6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.....35
ՁԱՓԱՆԻՇ 7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ.....38
ՁԱՓԱՆԻՇ 8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....41
ՁԱՓԱՆԻՇ 9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ.....45
ՁԱՓԱՆԻՇ 10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....47
ՀԱՎԵԼՎԱԾ 1 ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ...51
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ.....55
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.....57
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՅՑԵՐԸ.....66

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հյուսիսային համալսարանը Հայաստանի Հանրապետությունում պետականորեն արտոնագրված մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն է, որը հիմնադրվել է 1996 թ. և իրականացնում է «ՀՀ կրթության որակավորումները և դրանց ընդհանրական բնութագրերը» փաստաթղթի (ՈԱԾ) 6-րդ և 7-րդ մակարդակներին համապատասխան մասնագիտական կրթություն: Համալսարանն իրականացնում է ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցում: ՄՈՒՀ-ն ունի 6 պետական հավատարմագիր ստացած մասնագիտություն՝ «Իրավագիտություն», «Մանկավարժություն և մեթոդիկա», «Օտար լեզու և գրականություն», «Լրագրություն», «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում», "Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա": Երկու մասնագիտություն՝ «Հայոց լեզու և գրականություն» և «Հոգեբանություն», որոնք ավելի ուշ են բացվել, առայժմ հավատարմագրված չեն:

Հաստատության կառավարման մարմիններն են համալսարանի ընդհանուր ժողովը, համալսարանի ռեկտորը, գիտական խորհուրդը, ռեկտորատը: Համալսարանն ունի 2796 ուսանող, 108 դասախոս, 61 վարչական աշխատակից: 2012թ.-ի սկզբին մշակվել և Հյուսիսային համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվել է ՄՈՒՀ-ի նոր առաքելությունը, որին հետևել է համալսարանի նոր՝ 10 չափանիշներից բաղկացած Ռազմավարական ծրագրի մշակումը, որի լրամշակումը դեռևս ընթացքի մեջ է: Ընդ որում, ամբիոնները և դեպարտամենտները նույնպես մշակել և համալսարանի կայքէջում տեղադրել են իրենց Ռազմավարական ծրագրերը:

Հիմք ընդունելով իր առաքելության հիմնական դրույթները, Հյուսիսային համալսարանն իր ռազմավարական կարևոր խնդիրներն է համարում համալսարանում կրթության որակի ապահովման ներքին համակարգի կատարելագործումը, համալսարանի կազմակերպչական և ֆինանսատնտեսական կառավարման, ռեսուրսների բաշխման արդյունավետ համակարգի ձևավորումը, համալսարանի ուսումնամեթոդական փաստաթղթերի շարունակական կատարելագործումը, ուսանողակենտրոն համակարգի արդյունավետության

բարձրացումը, համալսարանի գիտակրթական գործընթացներում նորարարական տեխնոլոգիաների և մեթոդների ներդրումը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ[1]

Հյուսիսային համալսարանի ինքնավերլուծության, կրթական և որակի ապահովման գործընթացների իրականացման արտաքին գնահատում կատարվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- Կարինե Նալչաջյան, փորձագիտական խմբի ղեկավար, դոցենտ, ՀՀ
- Դոկտոր Ջագաննաթ Փաթիլ, միջազգային փորձագետ, Հնդկաստան
- Արևիկ Սարգսյան, դոցենտ, ՀՀ;
- Արևիկ Հովհաննիսյան, դոցենտ, ՀՀ;
- Հռիփսիմե Մարկոսյան, ուսանող, ՀՀ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի համակարգող Լուիզա Միլիտոսյանը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նախապատրաստական փուլ

Փորձնական Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Հյուսիսային համալսարանը դիմել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմումը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի կազմի համառոտ կենսագրությունները

Դիմում հայտի ընդման մասին որոշում ընդունելուց հետո ՈԱԱԿ-ի, Կրթական ծրագրերի կենտրոնի և բուհի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով ըստ ՈԱԱԿ-ի սահմանած ձևաչափի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՀՊԱՀ ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Ինքնավերլուծության վերաբերյալ ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով նշանակված հավատարմագրման գործընթացի համակարգողի դրական կարծիքը ստանալուց հետո՝ քարտուղարությունը այն ուսումնասիրման համար տրամադրել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Նախքան այցը փորձագիտական խումբն ուսումնասիրել է հաստատության ներկայացրած ինքնավերլուծության զեկույցը, կից ներկայացված փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում, կազմել է փորձագիտական այցի ժամանակացույցը, առանձնացրել՝ հանդիպումների ընթացքում պարզաբանման ենթակա հարցերը, ինչպես նաև այն ստորաբաժանումները կամ խմբերը, որոնց հետ հանդիպումների ժամանակ կարելի էր ստանալ բարձրացված հարցերի պատասխանները:

Նախնական այց

Գործընթացի համակարգողը, խմբավորված ուսումնասիրման ենթակա հարցերի և խնդիրների հիման վրա, փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել է այցի ժամանակացույց[2], որը համաձայնեցվել է հաստատության հետ՝ համակարգողի և խմբի ղեկավարի կողմից իրականացված նախնական այցի ժամանակ: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող

[2] Հավելված 2. Ժամանակացույց

հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Դիտարկվել են խմբին տրամադրվող սենյակը, հանդիպումների դահլիճը և տեխնիկական միջոցները: Համալսարանին ներկայացվել են ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը, ստորաբաժանումները, ուր ցանկանում են այցելել փորձագետները և աշխատակիցների ցանկը, ում հետ նախատեսվում են հանդիպումներ:

Փորձագիտական այց

Այցը սկսվելու նախորդ օրը տեղի է ունեցել տեղացի փորձագետների հանդիպումը արտասահմանցի գործընկերոջ հետ, որի շրջանակներում.

- քննարկվել և համաձայնացվել է գնահատման շրջանակը,
- վերջնականացվել և հաստատվել է խմբի աշխատանքային մեթոդը,
- վերջնականապես ի մի են բերվել հանդիպումների հարցերը, վերջնականացվել է հանդիպումների հանդիպումների նախապատրաստությունը,
- ներկայացվել են նախնական գնահատման արդյունքները:

Փորձագիտական խումբը այցն իրականացրել է դեկտեմբերի 3-ից 7-ը: Փորձագիտական այցին մասնակցել են խումբն ամբողջությամբ, համակարգողը, թարգմանիչը և քարտուղար-սղագրողը:

Այցը մեկնարկել է հաստատության ռեկտորի հետ հանդիպումով: Փորձագիտական այցելության ավարտին նս խումբը հանդիպում է ունեցել ռեկտորի հետ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված բոլոր հանդիպումների մասնակիցներին /դասախոսներ, ուսանողներ, վարչակազմ/ փորձագիտական խումբը ընտրել է հաստատության ներկայացրած ցուցակներից՝ պատահականության սկզբունքով: Ընդ որում, ստացած տպավորություններն ու բարձրացված հարցերի պատասխաններն ավելի հստակեցնելու և ամբողջական դարձնելու նպատակով փորձագիտական խումբը հանդիպել է պատահականության սկզբունքով ընտրված երկու խումբ դասախոսների և ուսանողների հետ: Հանդիպումներ են տեղի ունեցել նաև ինքնավերլուծությունն իրականացրած ողջ

խմբի հետ, այցելություններ են իրականացվել համալսարանի բոլոր ստորաբաժանումներ, այդ թվում նաև՝ համալսարանում գործող կենտրոններ: Բաց հանդիպումը ժամանակացույցով նախատեսված էր, փակցված էին այդ մասին տեղեկացնող հայտարարություններ, սակայն մասնակիցներ չգրանցվեցին:

Այցի ժամանակ փորձագիտական խումբը ռեսուրսների դիտարկում և փաստաթղթերի ուսումնասիրություն է իրականացրել համալսարանի մի շարք ստորաբաժանումներում[3]: Տեղում իրականացվեց նաև լրացուցիչ փաստաթղթերի ուսումնասիրությունը[4]:

Այցի ավարտին տեղի ունեցած խմբի փակ հանդիպման ժամանակ ամփոփվեցին այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման եռաստիճան սանդղակ՝ *անբավարար, մասամբ բավարար և բավարար:* Այդ սանդղակով փորձագիտական խումբը նախ առանձին-առանձին գնահատել է համալսարանի գործունեությունն ըստ առանձին չափորոշիչների, ապա նաև՝ ըստ չափանիշների:

Փորձագիտական զեկույց

Այցի ավարտից հետո երկու շաբաթվա ընթացքում փորձագետները ներկայացրեցին իրենց անհատական հաշվետվությունները: Դրանց հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ համակարգողը պատրաստեցին փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվեց փորձագետների հետ: Զեկույցի միայն փաստերի մասը ուղարկվեց համալսարանին՝ դիտողությունների և առաջարկությունների համար: Հաշվի առնելով համալսարանի դիտարկումները՝ խումբը փոփոխություններ կատարեց որոշ չափորոշիչների գնահատման արդյունքների ձևակերպումների մեջ և պատրաստեց փորձագիտական զեկույցը՝ նրանում ներառելով նաև դատողությունները, գնահատումը և խորհրդատվությունը: Վերջնական զեկույցը ստորագրությամբ հաստատել է փորձագիտական խմբի ղեկավարը:

---

[3] Հավելված 4. Ուսումնասիրված փաստաթղթեր

[4] Հավելված 3. Փորձագիտական խմբի այցերը

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՓԱՆԻՇ 1

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հյուսիսային համալսարանի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը հիմնականում համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որն իր հերթին, ըստ էության, համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ՀԱՓԱՆԻՇ 2

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումը ըստ էության, միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը, սակայն դրանց արդյունավետությունը մասամբ է արդյունավետ, իսկ էթիկայի նորմերը թեև փաստացիորեն պահպանվում են, սակայն փաստաթղթային ամրագրում չեն ստացել:

ՀԱՓԱՆԻՇ 3

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՄՈՒՀ-ում ՄԿԾ-երի ստեղծումը դեռևս գտնվում է մեկնարկային փուլում. պլանավորման մասով որոշակի աշխատանքներ կատարված են, սկզբունքորեն դրանք համապատասխանեցված են հաստատության առաքելության հետ: Բայցևայնպես, ընդամենը առաջին քայլերն են կատարվում դրանց իրականացման ուղղությամբ:

ՀԱՓԱՆԻՇ 4

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով համալսարանին հաջողվում է ուսանողներին տրամադրել համապատասխան աջակցություն:

ՉԱՓԱՆԻՇ 5

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

Փորձագիտական խումբը դիտարկման արդյունքում հանգեց այն համոզման, որ ՄՈՒՀ-ն, ըստ էության, ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով, որոնք ի զորու են համալսարանի առաքելությանը նպատակամետ գործունեություն իրականացնել:

ՉԱՓԱՆԻՇ 6

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հետազոտությունների իրականացման, ուսումնառության հետ դրա կապի և այս ուղղությամբ իր զարգացումն ապահովելու տեսակետից ՄՈՒՀ-ը դեռևս գտնվում է պլանավորման վաղ փուլում: Մասնավորապես, այս ոլորտը դեռևս հստակորեն կանոնակարգված չէ: ՄՈՒՀ-ը գիտակցում է այս ասպարեզում իր գործունեության թույլ լինելը և պլանավորում է քայլեր ձեռնարկել դրա շտկման ուղղությամբ:

ՉԱՓԱՆԻՇ 7

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Թեև ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան, ընդհանուր առմամբ, նպաստավոր պայմաններ է ապահովում ուսումնական միջավայրի ստեղծման և ՄՈՒՀ-ի առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար, հասանելի է ինչպես ուսանողությանը, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմին, սակայն այս ոլորտում գնահատման մեխանիզմների բացակայությունը գործընթացները դարձնում են տարերային:

ՉԱՓԱՆԻՇ 8
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՒՀ-ում մշակված են և հիմնականում գործում են միայն վերընթաց ներքին հաշվետվողականության առանձին մեխանիզմներ, իսկ վայրընթաց հաշվետվողականության բացակայությունը թուլացնում է հետադարձ կապի սկզբունքը: Արտաքին շահակիցների նկատմամբ հաշվետվողականությունը մասնակիորեն իրականացվում է, սակայն՝ առանց հատուկ մշակված ռազմավարության և քաղաքականության: Համալսարանի գործունեության ուժեղ կողմերից մեկը պետք է համարել հասարակությանն արժեքներ փոխանցելու գործառույթի հաջող իրականացումը:

ՉԱՓԱՆԻՇ 9
ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Չնայած իրականացրած որոշակի քայլերին, ՄՈՒՀ-ն արտաքին կապերի հաստատման հարցում դեռևս գտնվում է մեկնարկային փուլում և դեռևս վաղ է խոսել հաստատության միջազգայնացման և փորձի փոխանակման ասպարեզներում գրանցված շոշափելի արդյունքների մասին:

ՉԱՓԱՆԻՇ 10
ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Անցումային շրջանի համար որակի ապահովման՝ ՄՈՒՀ-ում մշակված ներքին համակարգն իր քաղաքականությամբ ու ընթացակարգերով բավականին արդյունավետ է և նպաստում է հաստատության գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՉԱՓԱՆԻՇ I. Առաքելությունը եվ նպատակները. *բավարար*

ՉԱՓԱՆԻՇ II. Կառավարումն ու վարչարարությունը. *մասամբ բավարար*

ՉԱՓԱՆԻՇ III. Մասնագիտության կրթական ծրագրերը. *մասամբ բավարար*

ՉԱՓԱՆԻՇ IV. Ուսանողները. *բավարար*

ՉԱՓԱՆԻՇ V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը. *բավարար*

ՉԱՓԱՆԻՇ VI. Հետազոտությունը եվ զարգացումը. *մասամբ բավարար*

ՉԱՓԱՆԻՇ VII. Ենթակառուցվածք և ռեսուրսներ. *մասամբ բավարար*

ՉԱՓԱՆԻՇ VIII. Հասարակական պատասխանատվությունը. *մասամբ բավարար*

ՉԱՓԱՆԻՇ IX. Արտաքին կապերը և միջազգայնացումը. *մասամբ բավարար*

ՉԱՓԱՆԻՇ X. Որակի ներքին ապահովման համակարգը. *բավարար*

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ՝ *մասամբ բավարար*

Փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը հայտարարում են, որ այս զեկույցը կազմված է խմբի անդամների հաշվետվությունների հիման վրա: Խումբը ուսումնասիրել է զեկույցը և համաձայն է նրանում բերված գնահատականների հետ: Խմբի անդամները հավաստում են, որ գնահատումն իրականացվել է փորձագետների անկախության սկզբունքի պահանջների համաձայն:

15.04.2013թ.

դոց. Կարինե Նալչաջյան

դոց. Լուիզա Միլիտոսյան

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՁԱՓԱՆԻՇ 1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Հյուսիսային համալսարանը Հայաստանի Հանրապետությունում պետականորեն արտոնագրված մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է«ՀՀ կրթության որակավորումները և դրանց ընդհանրական բնութագրերը» փաստաթղթի (ՈԱՇ) 6-րդ և 7-րդ մակարդակներին համապատասխան մասնագիտական կրթություն: 2012թ.-ի սկզբին մշակվել և Հյուսիսային համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվել է ՄՈՒՀ-ի նոր առաքելությունը, որին հետևել է համալսարանի նոր 10 չափանիշներից բաղկացած Ռազմավարական ծրագրի մշակումը, որի լրամշակումը դեռևս ընթացքի մեջ է: Ընդ որում, ամբիոնները և դեպարտամենտները նույնպես մշակել և համալսարանի կայքէջում տեղադրել են իրենց Ռազմավարական ծրագրերը:

Հիմք ընդունելով իր առաքելության հիմնական դրույթները, Հյուսիսային համալսարանն իր ռազմավարական կարևոր խնդիրներն է համարում համալսարանում կրթության որակի ապահովման ներքին համակարգի կատարելագործումը, համալսարանի կազմակերպչական և ֆինանսատնտեսական կառավարման, ռեսուրսների բաշխման արդյունավետ համակարգի ձևավորումը, համալսարանի ուսումնամեթոդական փաստաթղթերի շարունակական կատարելագործումը, ուսանողակենտրոն համակարգի արդյունավետության բարձրացումը, համալսարանի գիտակրթական գործընթացներում նորարարական

[illegible]

տեխնոլոգիաների և մեթոդների ներդրումը: Փորձագիտական այցի ժամանակ կրթության կառավարիչները նշեցին, որ նշված խնդիրների լուծումը այնքան էլ հեշտ չի տրվել ու տրվում այն պարզ պատճառով, որ մեզանում կրթության որակի ապահովման մշակույթը, ըստ էության, նորույթ է և առկա է ադապտացիայի խնդիր: Դժվարությունների հաղթահարման հարցում ՄՈՒՀ-ին օգնել են կազմակերպված սեմինարները, կլոր սեղանները, ներքին և արտաքին շահակիցների հետ ունեցած շփումներն ու համատեղ քննարկումները: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ բավականաչափ արդյունավետ գործունեություն է իրականացնում 2010 թ.-ին ստեղծված Որակի վարչությունը, որի ջանքերով կրթության որակին վերաբերող համալիր հարցեր են բարձրաացվում գիտխորհրդի և ռեկտորատի նիստերում, դրանք դառնում են ամբիոնների, ուսանողական խորհրդին քննարկումների առարկա:

ՄՈՒՀ-ի առաքելության մեջ նշված է, որ համալսարանը պլանավորում է իրագործել իր գիտակրթական գործունեությունը ազգային լավագույն ավանդույթների և միջազգային առաջավոր փորձի զուգակցմամբ: Այս նպատակով Համալսարանում արդեն իսկ ստեղծված է արտաքին կապերն իրականացնող համապատասխան կառույց, կապ է հաստատված երկու արտասահմանյան համալսարանների հետ: Այդուհանդերձ, ինչպես ցույց տվեցին փորձագիտական խմբի ուսումնասիրությունները, դեռևս բացակայում են միջազգային փորձի ուսումնասիրությանը և միջազգային կապերի հաստատմանն ուղղված ակտիվ քայլերը և դրանցից բխող կոնկրետ արդյունքները: Կրթության կառավարիչները դա հիմնականում բացատրում էին ֆինանսական միջոցների սղությամբ: Փորձագետների հետ հանդիպման ժամանակ հաստատության ռեկտորը շեշտեց, որ Հյուսիսային համալսարանը խորհրդանշում է հայ-ռուսական կապերի առաջնայնությունը:

Համալսարանի առաքելությունն, ըստ էության, իր մեջ ամփոփում է ներքին և արտաքին շահակիցների կարիքներին վերաբերող դրույթներ: ՄՈՒՀ-ն ունի նորմատիվ փաստաթղթեր, որոնք հիմք են ստեղծում ներքին շահակիցների կարիքների բացահայտման համար: Սակայն դրանցից ոչ բոլորն են իրենց մեջ պարունակում իրականացման մեխանիզմների հնարավորություններ, ինչի պատճառով ունեն թույլ գործառնական ելքեր: Այս տեսակետից ավելի արդյունավետ է գործում "Հյուսիսային համալսարանում որակի բարելավման, որակյալ

M. MV check

բարձրագույն կրթության ապահովման նպատակով ուսանողական հարցման և դասախոսների գնահատման" կանոնակարգը, որը հնարավորություն է տալիս ուսանողին՝ գնահատելու իր դասախոսներին՝ դրանով իսկ վեր հանելով ՄՈՒՀ-ի կարիքները դասավանդման և դասախոսների վերապատրաստման ուղղությամբ: Հյուսիսային համալսարանում որակի բարելավման, որակյալ բարձրագույն կրթության ապահովման նպատակով իրականացվող աշխատանքներում իրենց ուրույն տեղն ունեն Ֆոկուս խմբերի շրջանակներում իրականացված աշխատանքները: Ուսումնաօժանդակ կազմի կարիքների վեր հանման հարցին վերաբերող նշումներ չափորոշիչում չկան: Ինչ վերաբերում է արտաքին շահակիցների կարիքների վերհանմանը, ապա այս ուղղությամբ ՄՈՒՀ-ի ծավալած գործունեությունը, ինչպես ամրագրված է ինքնավերլուծության մեջ՝ անբավարար է և անարդյունավետ: Իրավիճակը շտկելու համար այս ուղղությամբ որոշակի քայլեր է փորձում կատարել Կարիերայի և շրջանավարտների կենտրոնը: Այնուամենայնիվ, ներքին շահակիցների մասով ստացված արդյունքներն ավելի շոշափելի են, քան արտաքին շահակիցների պարագայում: Համալսարանի ծավալած գործունեության և որդեգրած առաքելության համապատասխանության օրինակ է այն, որ, ՄՈՒՀ-ի թվով տաս շրջանավարտներ ներգրավված են ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններում որպես համայնքապետեր:

Ստեղծվել է աշխատանքային խումբ, որն ինտենսիվ կերպով մշակել և արդիականացրել է ավելի քան երեք տասնյակ կարգ, որոնք կանոնակարգել են առաքելության իրականացմանը ուղղված ՄՈՒՀ-ի համալիր գործունեությունը:

Պետք է արձանագրել, որ նոր նորմատիվ փաստաթղթերի ստեղծման և/կամ արդիականացման ուղղությամբ ՄՈՒՀ-ում կատարված ծավալուն աշխատանքները ստեղծել են բավարար հիմք՝ սեփական առաքելության համապատասխան՝ ՌԾ-ով նախատեսված գործունեության իրականացման համար: Թեև ներկայումս համալսարանում առկա են արդյունքների գնահատման և բարելավման բավականին մեծ թվով մեխանիզմներ և հաստատված ընթացակարգեր, բայց դրանք ստեղծվել են շտապողական կարգով և մոնիթորինգային աշխատանքների իրականացումը բավարար մակարդակի չի հասել:

M. W zkreśl.

Ինչ վերաբերում է համալսարանի առաքելության և ՀՀ ՈԱԾ-ի համահունչ լինելու խնդրին, ապա պետք է արձանագրել, որ ՄՈՒՀ-ը կրթական գործունեություն է իրականացնում 8 մասնագիտությունների գծով ՀՀ ՈԱԾ-ի 6-րդ /բակալավր/ և 6 մասնագիտությունների գծով՝ 7-րդ /մագիստրոս/ մակարդակներին համապատասխան: Փորձագիտական հետազոտությունը ամրագրեց այն փաստը, որ ընդհանուր առմամբ ՄՈՒՀ-ի առաքելությունը համահունչ է ՀՀ ՈԱԾ-ին: Որոշակի խնդիրներ է հարուցում մագիստրոսական մակարդակում ուսանողների հետազոտական գործունեության կազմակերպման հարցում շոշափելի արդյունքների պակասը:

Ըստ էության, ՄՈՒՀ-ի կողմից պլանավորված և իրականացվող գործունեությունը համապատասխանում է ինչպես իր առաքելությանը, այնպես էլ ՀՀ ՈԱԾ-ի պահանջներին: Այնուամենայնիվ, համապատասխանությանն ուղղված կոնկրետ գնահատման և վերանայման մեխանիզմները դեռևս հստակորեն չեն գործում: Այսպես օրինակ, նախորդ Ռազմավարական ծրագրի անկատար լինելու, ինչպես նաև ապագա Ռազմավարական ծրագրի ավելի լավը լինելու մասին համոզմունքը հիմնավորված չէ ստուգման, գնահատման և վերլուծության արդյունքներով:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-ի հավակնությունները մեր երկրի բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում կարելի է ձևակերպել, որպես բնակչության նվազ սոցիալ-տնտեսական հնարավորությունների տեր շերտի ներկայացուցիչների «մուտքի» դեպքում բավարար վերջնարդյունքի «ելք» ապահովելը: Ըստ ամենայնի, նպատակահարմար է, որպեսզի այս գաղափարը ամրագրվի համալսարանի ռազմավարական փաստաթղթերում: Կարծում ենք, որ համալսարանի գործունեությունը կշահի, եթե ավելի մեծ ուշադրություն դարձվի արտաքին շահակիցների խնդիրների վերհանմանը և այդ ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ ելնելով հաստատության կողմից որդեգրված առաքելության և նպատակների տրամաբանությունից: Ընդ որում, ցանկալի է, որպեսզի ծնողները ևս դիտարկվեն որպես արտաքին շահակիցներ և հաշվի առնվեն նաև նրանց կարիքները:

ՄՈՒՀ-ում կրթության որակի ապահովման տեսակետից շատ ավելի նպաստավոր վիճակ կստեղծվի, եթե ավելի մեծ ուշադրություն դարձվի որակի

Ch. Ch. Schuch.

ապահովման ուղղությամբ իրականացվող վերահսկողությանը և ակտիվացվեն մոնիթորինգային խմբի աշխատանքները՝ դրանցում շեշտելով արդյունքների չափելիության և հետադարձ կապերի ապահովման հարցերը: Այս համատեքստում, օրինակ, որակի ապահովման վարչությունը կարող է պարբերաբար վերլուծել առաքելության և նպատակների իրականացման արդյունքները և կազմել՝ ամեն կիսամյակը կամ տարին մեկ անգամ հաշվետվություն այդ թեմայով: Վերլուծական հաշվետվության տվյալների հիման վրա հնարավոր կլինի կազմել առավելագույնս իրատեսական ապագայի պլաններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը դիտարկման արդյունքում հանգեց այն եզրակացության, որ սույն չափանիշի շրջանակներում ՄՈՒՀ-ի իրականացրած գործունեությունը կարելի է գնահատել բավարար:

ՉԱՓԱՆԻՇ 2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:

Համալսարանի կառավարման համակարգն իր բնույթով այնպիսին է, որ, աշխատանքի արդյունավետ կազմակերպման պայմաններում կարող է իրականացնել հաստատության առջև դրված նպատակներն ու խնդիրները: Կառավարման համակարգում գործում են վարչական ենթահամակարգի կառավարող սուբյեկտներ /ռեկտոր, պրոռեկտոր, ուսվարչության պետ, դեկաններ, ամբիոնների վարիչներ/ և կառավարման կոլեգիալ մարմիններ /գիտխորհուրդ, ուսումնամեթոդական խորհուրդ, ֆակուլտետային խորհուրդներ, ամբիոններ/: Կառավարող սուբյեկտները հաշվետու են կառավարման կոլեգիալ մարմիններին: Սակայն, ինչպես նշված է ինքնավերլուծության մեջ, հաշվետվողականության մեխանիզմները մինչ այժմ լավ չեն գործել, հաշվետվողականությունը պարտադիր չի եղել և կրել է մասնակի բնույթ: Մասնավորապես, մինչև այժմ չի գործել ՄՈՒՀ-ի ռեկտորի տարեկան հաշվետվությունների ավանդույթը: Փորձագիտական այցի

[illegible]

ժամանակ այս խնդրի կապակցությամբ արդեն գրանցվեց բարելավում. փորձագետներին ներկայացվեց ՄՈԻՀ-ի ռեկտորի ընթացիկ տարվա հաշվետվության նախագիծը:

Արձանագրվեց նաև այն իրողությունը, որ ՄՈԻՀ-ը տրամադրում է բավարար ռեսուրսներ, որոնք թույլ են տալիս ապահովել հաստատության բնականոն կենսագործունեությունը: Այնուամենայնիվ, չնայած իր գործունեության տասնհինգ տարիների ընթացքում համալսարանը զգալի ներդրումներ է կատարել և ապահովել է իր կողմից հռչակված նպատակների իրականացման ընթացքը, բայցևայնպես, իր առաքելությունը լիարժեք կերպով կյանքի կոչելու համար հաստատությունը դեռևս ունի նոր ռեսուրսների ներդրման կարիք:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ՄՈԻՀ-ն ունի կառավարչական որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց: Այս տեսակետից պետք է արձանագրել, որ ՄՈԻՀ-ում ձևավորվել է սուբորդինացիայի և ժողովրդավարության համադրման վրա հիմնված կորպորատիվ մշակույթ: Համալսարանի կազմակերպական կառուցվածքի և առաքելության արդյունավետ իրականացման միջև առկա է տրամաբանական կապ: Ըստ էության, հաստատության կառավարման համակարգը փաստացիորեն գործում է էթիկայի կանոններին համապատասխան կերպով, բայցևայնպես, էթիկայի խնդիրները որևէ փաստաթղթային արտացոլում չեն գտել:

Գնահատանքի է արժանի նաև այն փաստը, որ կառավարման սուբյեկտների հաշվետվողականության հարցում ՄՈԻՀ-ում գրանցվում է աստիճանականառաջընթաց: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է նրան, որ արդեն իսկ կյանքի է կոչվում համալսարանի ռեկտորի տարեկան հաշվետվությունների ավանդույթը:

Փորձագիտական այցի շրջանակներում իրականացված հանդիպումները ՊԴ կազմի և ուսանողության ներկայացուցիչների հետ վկայեցին այն մասին, որ առկա են բավականաչափ փաստեր, երբ դասախոսներն ու ուսանողները մասնակցել են իրենց առնչվող որոշումների կայացմանը: Ուսանողների տեղեկացվածության աստիճանը սեփական իրավունքների մասին բավականին բարձր էր: Առկա է նաև ռեկտորի հանձնարարականն ար այն, որ հաջորդ կիսամյակից անցկացվեն տեղեկատվության բարձրացման ակցիաներ, որոնք միտված են լինելու ՄՈԻՀ-ում որոշումներ

M. Mr Schuch.

կայացնելու գործընթացում դասախոսների և ուսանողների նեգրավվածության աստիճանի բարձրացմանը և այս ասպարեզում հետազոտության շնորհիվ բացահայտված թերությունների վերացմանը: Ընդ որում, ուսանողների ներգրավվածության աստիճանի բարձրացումը կապված է որակի ապահովման համակարգի ներդրման հետ: Բայց դրա կողքին, դեռևս հաղթահարված չէ դասախոսների նախաձեռնողականության պակասի խնդիրը:

Այս կապակցությամբ պետք է արձանագրել, որ ձևավորվող ավանդույթի շրջանակներում պլանավորումն ու իրականացումը գտնվում են բարվոք վիճակում և անհրաժեշտություն կա հոգալու ստացված արդյունքների կայունության չափանիշների մշակման և դրանց գործադրման հարցի մասին:

ՄՈՒՀ-ն ունի իր գործունեության վրա ազդող գործոնների դասակարգում, որում ըստ ամենայնի, հաշվի է առնված դրանց բազմազանությունն ու բնույթը /հիմնական և երկրորդական, ներքին և արտաքին, օբյեկտիվ և սուբյեկտիվ, մշտական և ժամանակավոր/: Սա կարելի է համարել սկզբնական քայլ՝ հաստատության գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության պլանավորման և հետագա իրականացման համար: Այնուամենայնիվ, այս դասակարգման հիման վրա իրականացված ամբողջական հետազոտություն իրականացված չէ: մի բան, որ թույլ կտար հստակ պատկերացնել նշված գործոններից յուրաքանչյուրի առկայության և ազդեցության աստիճանը:

ՄՈՒՀ-ում քաղաքականությունն ու ընթացակարգերի վարչարարությունը հիմնականում իրականացվում է որակի կառավարման սկզբունքով /պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում/: Եղել են գործընթացներ, որոնք վերանայվել են, բացահայտվել են թերությունները և կատարվել են աշխատանքներ դրանց կատարելագործման ուղղությամբ: Հաշվետվողականության մեխանիզմի բացակայությունը կամ թերի կատարումը նախկինում առաջ է բերել մի շարք խնդիրներ, որոնց արդյունքում նկատվել են ինչպես ժամանակային, այնպես էլ արդյունավետության առումով կորուստներ: Սակայն խնդիրը վերանայելուց հետո հաշվետվողականության մեխանիզմի վրա ավելի շատ ուշադրություն է դարձվել և այն որպես մշակույթ արդեն մեկնարկել է համալսարանում:

Mr. MV Steeg.

Համալսարանն իր կառավարման և վարչարարության համակարգում բացահայտել է պրոբլեմներ որակի կառավարման շրջափուլի հետ կապված. ՄՈՒՀ-ում աշխատանքները պլանավորվել են և իրականացվել, սակայն լավ մշակված մեխանիզմներ դրանց գնահատման և բարելավման ուղղությամբ չեն եղել: Ուստի խնդիր է դրվել մշակել այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան վերահսկել պլանավորածի իրականացումը աշխատանքի ընթացքում: ՄՈՒՀ-ը նախատեսում է ներդնել մշտադիտարկման, ընթացիկ հարցումների և գնահատման մեխանիզմները:

ՄՈՒՀ-ը գիտակցում է, որ որակի կառավարման սկզբունքի լիարժեք իրականացման տեսակետից դեռևս ունի լուրջ անելիքներ և սա պետք է գնահատել որպես լրջմիտ և իրատեսական մոտեցում այնպիսի կարևոր ոլորտում, ինչպիսին է հաստատության քաղաքականության, ընթացակարգերի վարչարարությունը հաշվետվողականությունը:

Համալսարանում ՄԿՇ գնահատման մեխանիզմներ են հանդիսացել ամբիոնների ներկայացված հաշվետվությունները, ֆակուլտետների դեկանների ընթացիկ և տարեվերջյան հաշվետվությունները ուսման որակի, պրակտիկաների անցկացման վերաբերյալ, ավարտական քննությունների հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:ՄԿՇ արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումն ու կիրառումը գնահատող մեխանիզմները նորացվում են, որպեսզի լուծվի ՄԿՇ թերությունների վերհանման ընթացիկ հնարավորությունների բարձրացման խնդիրը, որովհետև համարվում է, որ ՄԿՇ ելքային արդյունքների որակի ստուգումը արդյունավետ չէ:

Ինչպես ցույց տվեց փորձագիտական այցը, մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման մեխանիզմները համալրվում և բովանդակային առումով հարստացվում են: Աշխատանքն ընթացքի մեջ է, արդյունավետությունը հնարավոր կլինի պարզել միայն համակարգը լրամշակելուց հետո: ՄՈՒՀ-ը գիտակցում է, որ մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող նոր, արդյունավետ մեխանիզմների մշակման կարիք կա: Ներկայումս հաստատությունը փորձեր է կատարում այս ուղղությամբ

[illegible]

կատարելագործելու իր աշխատանքները: Սա աշխատատար գործընթաց է, որը ՄՈՒՀ-ում արդեն մեկնարկել է:

Ինչպես վկայում են ինքնավերլուծությունը և համալսարանում իրականացված փորձագիտական դիտարկումները, ՄՈՒՀ-ը բավականին ծավալուն աշխատանքներ է տանում սեփական գործունեության մասին տեղեկատվության տարածման ուղղությամբ: Համալսարանում ստեղծվել է Տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժին, որն առայժմ մեկ աշխատող ունի: Տեղեկատվության տարածման միջոց են ծառայում ինչպես"Հյուսիսային համալսարան" ամսագիրը, այնպես էլ հրատարակված ժողովածուները, ԶԼՄ-ների հետ բավականին ակտիվ շփումները: Պարբերաբար կազմակերպվում են մարզային այցելություններ, ՄՈՒՀ-ը պարբերաբար հանդիպումներ է անցկացնում նաև դպրոցներում:

Համալսարանն ունի ինտերնետային կայք, որը թարմացվում է կայուն պարբերականությամբ: Առկա է նաև FACEBOOK-ի էջ: Կայքից օգտվելու մշակույթը ուսանողների մոտ դեռ նոր է ձևավորվում: Նախատեսվում է անցկացնել ինտերնետային ֆորումներ: Ընթացիկ տարվա նոյեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 30-ը կայքէջ այցելել է 503 մարդ, իսկ ՖԲ էջը՝ 27703 մարդ:

Առայժմ մշակված չեն նաև տեղեկատվության հրապարակումները քանակական և որակական տեսանկյունից գնահատող մեխանիզմներ և համակարգված քաղաքականություն:

ՄՈՒՀ-ը բավականին ակտիվ տեղեկատվական գործունեություն է ծավալում: Առկա է հրապարակված բավականին ծավալուն ու բազմազան տեղեկատվություն, որը համակողմանիորեն լուսաբանում է համալսարանի անցած ուղին, ձեռքբերումները, այն խնդիրներն ու մարտահրավերները, որանց հետ բախվում է հաստատությունը: Մուհ-ի կողմից իրականացվող բավականին գործուն տեղեկատվական քաղաքականության արդյունքներից մեկը ուսանողների համակազմի համալրման գործը բավարար չափով կազմակերպել կարողանալն է:

ՄՈՒՀ-ի կողմից հրապարակվող «Հյուսիսային համալսարան» ամսագիրը պարբերաբար հանրությանը տեղեկություն է տալիս իր գործունեության, ՄԿՇ – ների և շնորհվող որակավորումների մասին: Համալսարանը տեղեկատվության հրապարակման համար կիրառել և կիրառում է տարբեր մոտեցումներ՝

Th. [illegible] [illegible]

հրապարակումներ մամուլում, ելույթներ հեռուստաընկերություններում, համալսարանին առնչվող հիշարժան իրադարձությունների նշում և այլն: Էական միջոցառում է նաև տեղեկատվության տարածումը դպրոցներում, մարզերում այցելությունների կազմակերպմամբ:

Պետք է փաստել, որ համալսարանում ձևավորման ընթացքում է գտնվում վերընթաց հաշվետվողականության ավանդույթը, իսկ վայրընթաց հաշվետվողականությունը բացակայում է: Բացի այդ, հաշվետվողականության մշակույթը դեռ պետք է ապահովվի՝ կառուցվածքների զարգացման դինամիկան վերլուծելու միջոցով:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ցանկալի է ավելի մեծ ներդրումներ կատարել ՊԴ կազմի մասնագիտական վերապատրաստման, գրադարանային ֆոնդի հարստացման, համալսարանի միջազգային կապերի ներտացման և ուսանողանպաստ գործունեություն ապահովելու համար անհրաժեշտ այլ ասպարեզներում: Ցանկալի է նաև վերանայել ՄՈՒՀ-ի կազմակերպչական կառուցվածքը, այնտեղ ներգրավելով հիմնադիրների ընդհանուր ժողովը, շտկելով և հստակեցնելով կապերը: Կրթության որակի ապահովման տեսակետից համալսարանի համար օգտակար կլինի ունենալ մշակված չափանիշներ, որոնց հիման վրա իրականացվող պարբերական գնահատումները թույլ կտան հստակ պատկերացում կազմել արդեն իսկ առկա գործընթացի կենսունակության և կայունության մասին:

Խորհուրդ է տրվում նաև մշակել ժամանակային տեսակետից հստակ ձևակերպումներ ունեցող կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողությունների պլաններ, որոնք կբխեն համալսարանի և ստորաբաժանումների ՌԾ-ներից: Դրանց առկայությունը հիմք կստեղծի պլանավորելու և իրականացնելու համար մշտադիտարկում, որը պարբերաբար կարձանագրի իրականացված աշխատանքների պլանավորման և կատարման դինամիկան, ինչպես նաև՝ դրանց համապատասխանությունը հաստատության առաքելությանն ու նպատակներին:

Լուրջ կատարելագործման կարիք ունի կառավարման սուբյեկտների հաշվետվողականության հարցը: Հաշվետվողականության մշակույթի ձևավորման հարցում կարևոր է ոչ միայն վերընթաց հաշվետվողականության ավանդույթի առկայությունը, այլև՝ վայրընթաց հաշվետվողականությունը, որը կառավարման ոչ

պակաս արդյունավետ գործիք է: Ընդ որում, հաշվետվողականության մեխանիզմներն ավելի արդյունավետ կգործեն, եթե հաշվի առնվի համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների զարգացման դինամիկան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը դիտարկման արդյունքում հանգեց այն եզրակացության, որ սույն չափանիշի շրջանակներում ՄՈՒՀ-ի իրականացրած գործունեությունը կարելի է գնահատել մասամբ բավարար:

ՉԱՓԱՆԻՇ 3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ՄԿԾ-ների մշակում ՄՈՒՀ-ն իրականացրել է, սակայն այդ գործընթացը դեռևս գտնվում է մեկնարկային փուլում: Այսպես, ՄԿԾ-ների բենչմարքինգ իրականացնելու համար, ինչպես նշված է ինքնավերլուծության մեջ, ընտրվել են մի քանի հանրապետական բուհեր և ՌԴ պետական կրթական չափորոշիչները: Այցի ընթացքում պարզաբանվեցին բենչմարքինգի շրջանակները: Պարզվեց, որ այն իրականացվել է Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ՄԿԾ-երի ուսումնասիրության շրջանակներում: Ինչպես նշեցին համալսարանի կրթության պատասխանատուները, բենչմարքինգի հետ կապված ունեն ուսումնասիրություններ, սակայն ունեն նաև շատ խնդիրներ, ինչպիսին է, օրինակ, պարտնյորներ գտնելու հարցը: Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ ՄԿԾ–ները որոշակիորեն բարեփոխվել են: Մասնավորապես, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրերը փոփոխության են ենթարկվել: Մնացած ամբիոնային ՄԿԾ-երը նույնպես որոշ չափով բարեփոխվել են: Ընդհանուր առմամբ, ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերը նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության

Ch. LW schwach.

արդյունքների: Փորձագետներին տրամադրված ՄԿԾ-ները դեռևս թերի էին մի շարք առումներով, օրինակ՝ դրանցում ներկայացված չէին ուսումնառության ակնկալվող արդյունքները: Հետևապես դեռևս վաղ է խոսել դրանց և հաստատության առաքելության կապի հարցի մասին: Անհրաժեշտ է նաև հիշատակել, որ չափանիշում, մասնավորապես, ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների ցանկում առկա են բազմաթիվ կրկնություններ, վրիպակներ, անհամապատասխանություններ:

Պարզվեց, որ ՄՈՒՀ-ը մտադիր է այս հարցով ակտիվորեն զբաղվել ներկայումս Համաշխարհային բանկի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

Թեև առկա ՄԿԾ-ներում ներկայացված չեն ուսումնառության ակնկալվող արդյունքները, բայց ինքնավերլուծությունում ընդգծված է դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման անհրաժեշտության խնդիրը, որի կապակցությամբ հիշատակվում են դասախոսական կազմի վերապատրաստման ուղղությամբ ՄՈՒՀ-ում ձեռնարկված քայլերն ու առկա խնդիրները: ՄՈՒՀ-ում իրականացվել է դասավանդման մեթոդներին նվիրված ուսուցում: Հանդիպումը ուսանողների հետ ցույց տվեց, որ վերջիններիս բավարարում են ուսուցման մեթոդները: Արձանագրվել է ուսանողների դժգոհության դեպք, որն արագ արձագանք է գտել և հարցը շտկվել է: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ համալսարանում պարբերաբար կատարվել և կատարվում են մասնագիտությունների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի արդյունավետության գնահատում և վերանայում: Այս հարցում համոզվածությունը հիմնվում է այն փաստի վրա, որ համալսարանում ուսումնառության արդյունքները մշտապես քննարկվում են գիտխորհրդի, ուսումնամեթոդական խորհրդի,ուսանողների հետ համատեղ ժողովների ընթացքում:

Ուսումնառության ակնկալվող արդյունքների հարցը մշտապես քննարկվում է ներքին շահակիցների հետ, ինչը չի կարելի ասել արտաքին շահակիցների պարագայում: ՄՈՒՀ-ում դասավանդման և ուսումնառության մեթոդների, ինչպես նաև դասավանդման նյութերի ու ռեսուրսների արդիականացման քաղաքականություն և ընթացակարգեր մշակված չեն: ՄՈՒՀ-ում կիրառվում են դասավանդման տեխնիկական միջոցներ, որոշ դեպքերում նաև՝ ինտերակտիվ մեթոդներ:

Mr. MV Schuch

Չնայած դասավանդման և ուսումնառության մեթոդների, ինչպես նաև դասավանդման նյութերի ու ռեսուրսների արդիականացման քաղաքականություն և ընթացակարգեր ՄՈՒՀ-ում մշակված չեն, այդուհանդերձ հիշյալ գործընթացների առկայությունը ակնհայտ է և, այսպես թե այնպես, հանգեցնում է ուսուցման ուսանողակենտրոն մոտեցումների գործադրմանը:

Ինքնավերլուծությունում ներկայացված էր, որ համալսարանում պարբերաբար կատարվում են առարկայական ծրագրերի արդյունավետության գնահատում և վերանայում: Առկա է մասնագիտական ուսումնական պլանների մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման կանոնակարգ, որը ներկայացված է ինքնավերլուծության մեջ /էջ 79/: Մշակված է նաև դասավանդողի գործունեության գնահատման մեթոդական ուղեցույց /էջ 80/: ՄԿԾ-ները, ինչպես նշում էին համալսարանի պատասխանատուները, անընդհատ վերանայման ու լրամշակման գործընթացի մեջ են: Այս տեսակետից, ՄԿԾ-ների մշտադիտարկման տարրեր, ըստ էության, ՄՈՒՀ-ում առկա են, սակայն մշտադիտարկման արդյունավետության գնահատման և ըստ այդմ բարելավման մեխանիզմներ մշակված չեն: Թեև ՄԿԾ-ների մշտադիտարկում իրականացնելու մեթոդական ուղեցույցը կազմված է ՊԻՍԲ շրջափուլի սկզբունքով, սակայն փորձագիտական այցի ընթացքում համոզիչ կերպով չներկայացվեց առարկայական ծրագրերի արդյունավետության գնահատումը, քանի որ այն պետք էր բացահայտել հետադարձ կապի մեխանիզմներով, ինչը բացակայում էր իրականում:

Չափանիշում շրջանցված է ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի պարբերական բովանդակային թարմացման հարցը՝ կապված դրանցում գիտության տվյալ ոլորտի ժամանակակից նվաճումների ընդգրկման հետ: Սակայն տեղում իրականացված դիտարկումները ցույց տվեցին, որ հարցը գտնվում է համապատասխան ստորաբաժանումների և ՊԴ կազմի ուշադրության կենտրոնում:

Ուսանողների գնահատման քաղաքականության վերաբերյալ պետք է արձանագրել հետևյալը: Ինքնավերլուծությունում նշվում է գնահատման մեթոդների բազմազանության մասին, բայց արտացոլված չեն ուսումնական արդյունքների գնահատման չափելիության ապահովմանն ուղղված սկզբունքային մոտեցումներն ու չափանիշները: Գնահատման ասպարեզում առաջավոր փորձի վերլուծություն

իրականացված չէ: Չնայած այս հանգամանքներին, ինչպես ցույց տվեց փորձագետների այցը, ներկայումս ՄՈՒՀ-ի ուսումնամեթոդական վարչությունը զգալի և կարևոր աշխատանք է կատարել՝ մշակելով գնահատման նոր, առավելագույնս չափելի մեթոդաբանություն, որը պարունակում է հստակ չափորոշիչներ: Նոր մեթոդաբանությունը այժմ գտնվում է ներդրման փուլում: Կրթության պատասխանատուները համոզված են, որ գրավոր հարցումն ապահովում է առավել մեծ օբյեկտիվություն: Այս տեսակետից գնահատանքի են արժանի ՄՈՒՀ-ում իրականացվող փոփոխությունները: Այդուհանդերձ, իսպառ շրջանցված են բուն գրագողության դեմ պայքարելուն ուղղված ՄՈՒՀ-ի մոտեցումները:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ ՄՈՒՀ-ի որոշ մասնագիտական ծրագրեր կարող են ապահովել ուսանողների միջազգային շարժունություն, օրինակ «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում», «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա»: Սակայն այդպիսի որևէ փաստ դեռևս արձանագրված չէ: Գործող համակարգը թույլ է տալիս ուսանողներին տեղափոխվել այլ համալսարաններ հանրապետության ներսում: Զրուցելով ուսանողների հետ, բացահայտեցինք, որ նրանց մեջ կային ուսանողներ, ովքեր ՄՈՒՀ էին տեղափոխվել Հ. Աճառյանի անվան համալսարանից և հանձնել էին քննական տարբերություններ: Որպես ՄԿԾ-երի համահունչ լինելու և շարժունակության փաստ կարելի է հիշատակել այն իրողությունը, որ համալսարանի բակալավրիատի շրջանավարտները մագիստրատուրա են ընդունվել ՀՀ այլ համալսարաններում՝ մասնավորապես, ԵՊՀ, ԵՊՃՀ, ԵՊՄՀ: Այս փաստն արձանագրված էր նաև ինքնավերլուծության մեջ:

Լեհաստանի և Սանկտ-Պետերբուրգի համալսարանների հետ համագործակցության շրջանակներում նախատեսված է ուսանողների և դասախոսների շարժունակություն: Համալսարանը նախատեսում է փոխանակման ծրագրեր իրականացնել առկա դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Չափանիշում ներկայացված են նաև ներքին շահակիցների գործունեության արդյունավետության գնահատման մեթոդներն ու մոտեցումները, սակայն ներքին և արտաքին շահակիցների կարիքների ստուգման և բացահայտման հարցը դեռևս

դիտարկված չէ: ՄՈՒՀ-ում գործում է դասալսումների պրակտիկան. արդյունքների գրանցման համար մշակված է հատուկ ձևաթուղթ:

Հիմք ընդունելով վերհիշյալ փաստերը, պետք է արձանագրել, որ ՄՈՒՀ-ում մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման հստակ և մշակված քաղաքականություն՝ որպես այդպիսին դեռևս առկա չէ, սակայն դրա պատճառները օբյեկտիվ են: Հենց այն հանգամանքը, որ ՀՀ մասնագիտական կրթական համակարգում դեռևս լիովին մշակված և ներդրված չեն ՄԿԾ-ների հիմքում ընկած հստակ պահանջներն ու չափորոշիչները, ապա համալսարանում այս գործընթացի լիարժեք առկայությունը հնարավոր չէ: Այդուհանդերձ, ՄՈՒՀ-ը մեկնարկել է դրանց մշակման, բենչմարքինգի գործընթացները, կատարում է լրամշակման և բարելավման աշխատանքներ, փորձում է վերացնել դրանցում բացահայտված թերությունները:

Ուստի պետք է ընդգծել, որ սույն չափանիշի շրջանակներում ՄՈՒՀ-ը, ելնելով իր առաքելության հիմնական դրույթներից, որոշակի գործողություններ պլանավորում և իրականացնում է, բայցևայնպես, բավական անելիքներ դեռ առջևում են, քանի որ ՄԿԾ-երի ձևավորման և բարեփոխման գործընթացը մեզանում ինքնին նոր երևույթ է և որոշակի սկզբունքային մոտեցումներ դեռևս վերջնականապես մշակված չեն:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Չնայած այն իրողությանը, որ Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարությունում որևէ մասնագիտական որակավորման համար դեռ մշակված չեն ըստ ուսումնառության ակնկալվող արդյունքի կազմած մասնագիտության կրթական ծրագրեր և, ավելին, Աշխատանքի ազգային ինստիտուտը դեռ չի կազմել որակավորումների ազգային շրջանակներին համապատասխան մասնագիտական բնութագրեր ըստ որակավորման աստիճանների, և ըստ այդմ հնարավոր չէ պարտադրել ու պահանջել ՄՈՒՀ-ից լիարժեք համապատասխանություն այս չափորոշչին, այնուամենայնիվ, շատ կարևոր է և անհրաժեշտ փորձել կազմել սեփական ՄԿԾ-ները՝ հաշվի առնելով ուսումնառության ակնկալվող արդյունքները: ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի որակական ներուժը հնարավորություն կտա մշակել համապատասխան ծրագրեր՝ հաշվի առնելով ՈԱԱԿ-ի կողմից այդ ուղղությամբ առկա մշակումները /«Հայաստանի մասնագիտական կրթության համակարգում որակի ապահովման

ուղենիշներ, չափանիշներ և չափորոշիչներ» գիրքը /: Ընդ որում, ՄՈՒՀ-ում կազմած ՄԿԾ-ները անհրաժեշտ է ուղարկել արտաքին փորձաքննության տվյալ ոլորտի գործատուներին:

Կրթության որակի ապահովման համակարգում շատ կարևոր ներդրում կհանդիսանա նաև միջամբիոնային փոխքննարկումների կազմակերպումը: Փոխքննարկումները կարող են ընթանալ ցանկացած ձևաչափով, միայն թե արդյունքում տեղի ունենա լավագույն փորձի փոխանակում: Կարելի է ամբիոններում պարբերաբար կազմակերպել ՄԿԾ-ների քննարկման ուսումնամեթոդական սեմինարներ, ուր կներկայացվեն թե՛ դասալսումների արդյունքներ, և թե՛ կվերլուծվի ընթացիկ ՄԿԾ-ն, կմշակվեն մշտադիտարկման արդյունավետ մեխանիզմներ, կքննարկվեն բարելավման ուղիները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը դիտարկման արդյունքում հանգեց այնեգրակացության, որ սույն չափանիշի շրջանակներում ՄՈՒՀ-ի իրականացրած գործունեությունը կարելի է գնահատել մասամբ բավարար:

ՉԱՓԱՆԻՇ 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Համալսարանը զուգակցում է ուսանողների համակազմի ձևավորման մի շարք մեխանիզմներ: Ուսանողական համակազմի համալրման եղանակներ են մարզերի դպրոցներում շարունակաբար իրականացվող քարոզարշավները, տեղերում անցկացվող մասնագիտական կողմնորոշման զրույցները, բաց դռների օրերը, օլիմպիադաները, գովազդային տեսահոլովակների տարածումն ու հեռարձակումը, այլ միջոցառումներ: Այդուհանդերձ, փորձագիտական այցի ժամանակ համալսարանի կրթության պատասխանատուները, ինչպես նաև բոլոր օղակների ներքին շահակիցները համոզմունք հայտնեցին, որ ՄՈՒՀ-ում ուսանողների հավաքագրման ամենագործուն միջոցը իրենց շրջանավարտների բարի համբավն է: Ուսանողական ակտիվ կյանքը, բազմապիսի անվանական կրթաթոշակների

M. MV [illegible]

առկայությունը: Համալսարանը ապագա դիմորդների համար ավելի գրավիչ դարձնելու լրացուցիչ եղանակ է:Ուսանողների հավաքագրման եղանակների բազմազանությունը և ընդունելության իրականացման ձևերը հանգեցրել են ուսանողների թվաքանակի աճի:

Համալսարանը յուրահատուկ է նրանով, որ վարձավճարների մատչելիությունը հնարավորություն է ստեղծում կրթական ծառայություններ մատուցել միջինից ցածր կենսամակարդակ ունեցող ընտանիքների զավակներին: ՄՈՒՀ-ն ունի ուսանողների ընդունելության անցկացման քաղաքականություն և ընթացակարգ: Ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների համար ստեղծված են ակադեմիական պարտքերի վերահանձնման ճկուն մեխանիզմներ՝ ընդհուպ մինչև լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը, վերահանձնման անհատական գրաֆիկի սահմանումը: ՄՈՒՀ-ից ուսանողների հեռացումը կարող է լինել պայմանագրային պարտավորությունների չկատարման պատճառով, որոնցից են ուսումնական և ֆինանսական պարտքերի գոյացումը: Սակայն համալսարանն ուսանողների հեռացումն իրականացնում է ծայրահեղ դեպքերում:

ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիքների վեր հանման ավանդական եղանակներ, այսինքն, ուսանողների կարիքների վերհանումն իրականացվում է ուսանողական խորհրդի, ՄՈՒՀ-ի գիտխորհրդում ընդգրկված ուսանողների, ուսանողների կարիքների վերաբերյալ դեկանների զեկուցումների, ռեկտորի և ուսանողության հանդիպումների միջոցով: Ուսանողներն առանց բյուրոկրատական քաշքշուկների հնարավորություն ունեն հանդիպելու համալսարանի ռեկտորի, վարչակազմի անդամների հետ՝ անմիջականորեն նրանց ներկայացնելու իրենց հուզող հարցերը: Առկա են փաստեր, երբ ուսանողական խորհուրդը վեր է հանել մի շարք հարցեր, որոնք գտել են իրենց լուծումները:

Փորձագիտական դիտարկումները թույլ տվեցին հանգել այն համոզման, որ ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականությունը համալսարանում գործում է բավականին արդյունավետ կերպով: ՈԱ վարչությունն այս ուղղությամբ բավականաչափ աշխատանքներ է իրականացրել: Փորձագիտական խմբի հանդիպումները ուսանողության ներկայացուցիչների հետ /պատահական ընտրությամբ հրավիրված երկու խմբեր/ համոզիչ կերպով ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ն

ունի ակտիվ ուսանողություն, որը ՄՈԻՀ-ի կառավարման մարմինների հետ գտնվում է համագործակցային հարաբերությունների մեջ, անհրաժեշտության դեպքում անվարան կերպով հարցեր է բարձրացնում և ներկայացնում է իր կրթական կարիքները: Մյուս կողմից, առկա էին կոնկրետ փաստեր, երբ ուսանողների կողմից բարձրացված հարցերն ուսումնասիրվել էին համապատասխան ստորաբաժանումների պատասխանատուների կողմից և տրվել էին լուծումներ: Փորձագիտական խումբն այն տպավորությունն ստացավ, որ համալսարանում առկա են փոխադարձ վստահության և համակրանքի վրա հիմնված ջերմ հարաբերություններ ներքին շահակիցների տարբեր խմբերի միջև: Ավանդական մեթոդներից զատ ՄՈԻՀ-ում կիրառվում են ուսանողների կարիքների վեր հանման այնպիսի նոր եղանակներ, ինչպիսիք են ֆոկուս խմբերը, հարցումները: Բայցևայնպես, ՄՈԻՀ-ը գիտակցում է, որ ուսանողների կարիքների վեր հանման մեխանիզմներն ունեն կատարելագործման կարիք:

ՄՈԻՀ-ում չկան ուսումնառողներին հատկացվող խորհրդատուներ, սակայն նախատեսվում է ստեղծել այդ ավանդույթը: Խորհրդատվական ծառայություններ համալսարանի ուսանողներին հիմնականում անկանոն կերպով մատուցել են դասախոսները: Ուսանողներն, ըստ փաստացի գործող կարգի, ցանկացած հարցով կարող են դիմել վարչակազմին: Վարչական մարմինները հասանելի են ուսանողության համար, սակայն դա հարուցում է լրացուցիչ խնդիրներ՝ կապված վարչական աշխատողների կանոնավոր աշխատանքի հետ և առաջացել է անհրաժեշտություն՝ վերանայելու գործող կարգը: Այս հանգամանքը, սակայն չի դարձել խոչընդոտ վարչակազմի՝ ուսանողությանը հասանելի լինելուն: Այնուամենայնիվ, ՄՈԻՀ-ը գիտակցում է, որ վարչական օժանդակություն և ուղղորդում տրամադրելու գործընթացը կարիք ունի բարելավման:

ՄՈԻՀ-ում առկա ուսանողների կարիերային նպաստող ծառայությունը, չնայած մարդկային ռեսուրսների սղությանը, ունի մշակված աշխատանքային պլան և գործում է ըստ այդմ: Որպես ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետության միջոց, Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը ուսանողներին աշխատաշուկայում ճիշտ կողմնորոշելու և գործատուների առջև ճիշտ ներկայանալու համար կազմակերպել է մի շարք դասընթացներ: Պետք է

փաստել, որ արտաքին շահակիցների հետ կապված որոշակի աշխատանքներ տարվում են, համալսարանը հնարավորության սահմաններում կապ է պահպանում իր շրջանավարտների հետ, հետևում է նրանց գործունեությանը, անհրաժեշտության դեպքում համագործակցություն առաջարկելով նրանց: Հատկանշական է այն փաստը, որ համալսարանում այսօր բավականին պատասխանատու պաշտոններ զբաղեցնում են ՄՈՒՀ-ի շրջանավարտները: Ուսանողների կարիերային նպաստում է նաև պրակտիկայի բաժինը, կազմակերպելով ուսումնական և արտադրական պրակտիկաներ:

Հարկավոր է արձանագրել, որ սույն չափորոշիչի պարագայում բավականաչափ ակտիվություն է գրանցված հատկապես, պլանավորման և իրականացման հարցում, սակայն առայժմ նկատելիորեն թույլ են կատարված աշխատանքների գնահատման, առավել ևս՝ ստուգման և բարելավման բաղադրիչները:

Համալսարանում առկա է մեկ գերակա գիտահետազոտական ուղղություն՝ թումանյանագիտությունը, որում ներգրավված են «Հայոց լեզու և գրականություն» և «Լրագրություն» մասնագիտությունները ներկայացնող բակալավրներ, որոնց ընդգրկվածությունը բավականին մեծ է: Գործում է <<Վերնատուն>> կաբինետը, որտեղ փորձագետները ծանոթացան ուսանողների կողմից իրականացված աշխատանքներին: Փորձագիտական այցի ընթացքում ինքնավերլուծությունը կազմող խմբի հետ հանդիպման ժամանակ տեղեկացանք, որ խմբի մեջ ընդգրկված ուսանողներին, ի խրախուսումն նրանց հետազոտական ակտիվության՝ զեղչել են տարեկան ուսման վարձը:

ՄՈՒՀ-ն աշխատանքներ է տանում նաև գենդերային հետազոտությունների ուղղությամբ, որտեղ ներգրավված ուսանողները գրանցել են հաջողություններ:

Ինքնավերլուծությունում նշված է, որ ուսանողները ավարտական աշխատանքներ գրում են ըստ ցանկության:

Գերակա գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների մասնակցության ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը բացակայում են: Փաստորեն, համալսարանի գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը կրում է մասնակի բնույթ և

արդյունք է որոշ ամբիոնների կամ անհատ դասախոսների մասնավոր նախաձեռնողականության: Մագիստրոսի կրթական մակարդակում, որի յուրահատկություններից մեկը հենց հետազոտական աշխատանքների ակտիվ կատարումն է, այս ուղղությամբ արդյունքներ գրեթե չկան:

Հաստատությունում չկա ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին: Չնայած դրան, ՄՈՒՀ-ում փաստաթղթերով կանոնակարգված է ուսանողների իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրների որոշակի շրջանակ: Համալսարանի գիտխորհրդի կազմում ներկայացված է տասնութ ուսանող: ՄՈՒՀ-ը ստեղծել է դիմում-բողոքների ներկայացման մեխանիզմներ: Այդուհանդերձ /բացի նշված առանձին դեպքերից/, ուսանողները չեն դիմում համապատասխան ծառայություններին: Պատճառների բացահայտման համար հատուկ հետազոտություն կատարված չէ:

ՄՈՒՀ-ում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմները մշակման և ներդրման փուլում են: Որակի ապահովմանը միտված այդ գործընթացն իրականացնելու համար հաստատությունում ստեղծվել է հատուկ ուսանողական հանձնաժողով:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ցանկալի կլինի, որպեսզի ուսանողների հավաքագրման եղանակներից յուրաքանչյուրի արդյունավետության աստիճանը որոշելու նպատակով իրականացվեն պարբերական հետազոտություններ. հետադարձ կապի մեխանիզմի կիրառումը կնպաստի, որպեսզի ՄՈՒՀ-ի գործունեության այս կողմը խարսխվի ավելի հստակ ու ճշգրիտ տվյալների վրա:

Սույն չափանիշի շրջանակներում տարվող աշխատանքների կատարելագործմանը կնպաստի նաև իրականացված լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների արդյունավետության գնահատումը ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների տեսակետից: Իրականացված աշխատանքի թույլ և ուժեղ կողմերի բացահայտումը թույլ կտա կատարել անհրաժեշտ շտկումներ և ապահովել այս գործունեության արդյունավետությունն ու շարունակականությունը:

Կարելի է ուսանողների համար կազմակերպել սեմինարներ՝ նվիրված, առհասարակ, մարդու իրավունքներին, մասնավորապես, ուսանողների

Mr. MV Schuß

իրավունքների պաշտպանության հարցերին: Դա կնպաստի այս խնդրի վերաբերյալ ուսանողների գիտակցության բարձրացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը դիտարկման արդյունքում հանգեց այն եզրակացության, որ սույն չափանիշի շրջանակներում ՄՈՒՀ-ի իրականացրած գործունեությունը կարելի է գնահատել բավարար:

ՉԱՓԱՆԻՇ 5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Ինքնավերլուծության սույն չափանիշում ներկայացված են ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի գործունեության հիմքում ընկած նորմատիվ փաստաթղթերը: Պրոֆեսորադասախոսական կազմի համալրման քաղաքականությունը համապատասխանում է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգի պահանջներին: Համալսարանն ունի նաև մշակված ատեստավորման կարգ: ՄՈՒՀ-ի մի շարք լավագույն շրջանավարտներ ընդգրկված են համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմում: ՄՈՒՀ-ում մշակված է դասախոսների խրախուսման քաղաքականությունը և ընթացակարգը, կիրառվում են բարոյական և նյութական զանազան միջոցներ: Համալսարանում կիրառվում է բուհի ֆինանսական միջոցների հաշվին դասախոսների հետազոտությունների տպագրության պրակտիկան:

ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմն իր կրթական աստիճանով և կոչումների առկայությամբ համապատասխանում է ՄՈՒՀ-ի առաքելության և ՄԿԾ նպատակներին և պահանջներին: Համալսարանի շրջանավարտները համալրում են պրոֆեսորադասախոսական կազմը, գիտական կոչում ստանում և ծառայում հարազատ համալսարանին:

ՄՈԻՀ-ը գիտակցում է, որ մի շարք ներքին կանոնակարգման փաստաթղթերի մշակման և գործարկման արդյունքում կարող է բարձրանալ աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականության արդյունավետությունը և պրոֆեսորադասախոսական կազմի մոտիվացիան:

Տեղում փորձագիտական դիտարկումը ցույց տվեց, որ աշխատաշուկայի վերլուծությունն այս խնդրի կապակցությամբ իրականացվում է սպոնտան կերպով և հատուկ կանոնակարգված չէ: Կադրային քաղաքականությունն իրականացնելիս հաշվի են առնվում դասախոսների մի շարք կարևոր կարողություններ, սակայն չի նշվում, թե ինչպես են դրանք բացահայտվում:

ՄՈԻՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու տեսակետից կարևոր է այն հարցը, թե արդյոք հաստատությունում յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ: Այս կապակցությամբ ինքնավերլուծության մեջ նշված է, որ համալսարանում որոշակիացված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները և հղում է կատարվում հավելված 5բ-1-ն: Բայց միաժամանակ նաև նշված է, որ ՄՈԻՀ-ում դասախոսի իրազեկությունների համապատասխանությունը ստուգող գնահատման մեթոդիկա չի մշակվել, այդ իսկ պատճառով հնարավոր չէ հստակ վերլուծել համապատասխանությունը ՄԿԾ-ի սահմաններում շնորհվող որակավորումներին:

Դասախոսների հետ պայմանագրերը ամեն տարի վերանայվում են, իսկ աշխատավարձի չափի որոշման համար հաշվի է առնվում երեք գործոն. գիտական աստիճանը, ուսանողների առաջադիմության արդյունքը և կարգապահությունը: Առաջիկայում կգործարկվի դասախոսների ատեստավորման նոր կարգը, որը վերանայվել է՝ հաշվի առնելով ամբիոնների վարիչների առաջարկությունները: ՄՈԻՀ-ը կազմակերպել է ֆոկուս-խմբեր, դասախոսների գնահատման հարցումներ, վերլուծել է դրանք և ըստ այդմ վերանայել է պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջները: Ավագ սերնդի դասախոսների գիտական մեծ վաստակը հաշվի առնելով՝ համալսարանը ոչ միշտ է կարեորել ժամանակակից

M. [illegible] [illegible]

տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու նրանց կարողությունը կամ օտար լեզուների իմացությունը:

ՄՈՒՀ-ն ունի մշակված <<դասախոսի անձնագիր>> կոչվող փաստաթուղթ, որտեղ ներկայացված են ընդհանուր առմամբ դասախոսին ներկայացվող պահանջները, առկա են նաև այլ մշակված փաստաթղթեր: Սակայն դրանք պարունակում են ընդհանուր դրույթներ և չեն արտացոլում համապատասխան չափանիշում առկա հարցադրումն առ այն, որ պետք է հստակեցված լինեն ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջները:

Դատելով ինքնավերլուծությունից, դասավանդողների գնահատումը կատարվում է մի քանի սուբյեկտների կողմից. ուսանողներ, պրոռեկտոր, ամբիոնի վարիչներ, ուսումնական վարչություն, դեկաններ: Այդուհանդերձ, չափանիշում իր արտացոլումն է գտել միայն ուսանողների կողմից դասախոսների գնահատման հետ կապված վերլուծությունը: Գնահատող մյուս սուբյեկտների հարցը մնացել է առկախ: Բայցևայնպես, կիրառվող գործիքակազմը և դրանց իրականացման մեխանիզմները բավանդակալից են և չափելի: Դասախոսների գնահատումը ուսանողների կողմից կատարվում է՝ պահպանելով անանունության սկզբունքը: Դասախոսական կազմի պարբերական գնահատման համար ՄՈՒՀ-ն ունի ձևավորված քաղաքականություն: Առկա է դասախոսական կազմի գնահատման համար նախատեսված ընթացակարգ, ինչը պարբերաբար գործողության մեջ է դրվում: Պրոֆեսորադասախոսական կազմի պարբերական գնահատման համար լավագույն մեթոդ է համարվում հարցումների անցկացումը ուսանողության կողմից և դասալսումների կազմակերպումը համապատասխան ամբիոնների կողմից: Այս երկու եղանակներն էլ գործնականում գործում են ՄՈՒՀ-ում և վավերացված են համապատասխան կարգերում:

ՄՈՒՀ-ը չունի մշակված կարգ ու ընթացակարգեր պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր: Այնուամենայնիվ, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովմանը վերաբերող խնդիրները համալսարանում ինչ-որ չափով լուծվում են. դասախոսները պարբերաբար խրախուսվում են իրենց մասնագիտական առաջընթացի և լավ աշխատանքի համար,

M. Blv / Schmitz

իրականացվում են վերապատրաստումներ: Առ այսօր ՄՈՒՀ-ն իրականացրել է երեք տիպի վերապատրաստումներ՝ մասնագիտական, օտար լեզվի և համակարգչային կարողությունների ու հմտությունների ձևավորման ուղղությամբ:ՄՈՒՀ-ի շատ դասախոսներ պաշտպանել են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ:

Համալսարանն ունի նաև պատվավոր պրոֆեսորների և լավագույն բարեկամների ինստիտուտներ: Համալսարանը սոցիալական փաթեթ է առաջարկում իր աշխատակիցներին:

ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ, որը հմուտ է և, ըստ էության, իրականացնում է իր առջև դրված խնդիրները՝ ելնելով ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակներից: Ամբիոններում և դեպարտամենտներում աշխատում են եռանդուն և բանիմաց մեթոդիստներ:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Չափանիշի արդյունավետ իրականացման տեսակետից օգտակար է ամբիոնային և միջամբիոնային սեմինարների պարտադիր իրականացումը, որտեղ դասախոսներից յուրաքանչյուրը պարբերաբար կներկայացնի գիտության տվյալ ոլորտի վերաբերյալ իր ստացած նոր տեղեկությունները և այդ կապակցությամբ առկա մոտեցումները:Մյուս կողմից, չափանիշի շրջանակներում այլ կառույցների հետ համագործակցության գաղափարը օգտակար է և ցանկալի է, որ ստանա հետագա զարգացում: Կրթության որակի ապահովման տեսակետից բարձր արդյունքներ ստանալուն վստահաբար կօժանդակի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման բաղաքականության ու ընթացակարգերի մշակումն ու ներդրումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը դիտարկման արդյունքում հանգեց այն եզրակացության, որ սույն չափանիշի շրջանակներում ՄՈՒՀ-ի իրականացրած գործունեությունը կարելի է գնահատել բավարար:

Th. M. ohne B.

ՉԱՓԱՆԻՇ 6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Թեև Մուհ-ի ռազմավարական ծրագրում ամրագրված է, որ Հյուսիսային համալսարանը չի հանդիսանում գիտահետազոտական համալսարան, այնուամենայնիվ, հաստատությունում ձևավորված է ամբիոնների կողմից գիտական հետազոտությունների հեռանկարային ու կարճաժամկետ պլաններ և տարեկան հաշվետվություններ ներկայացնելու պրակտիկա: Յուրաքանչյուր տարի ՄՈՒՀ-ում կազմակերպվում են գիտաժողովներ: Առկա են 2007, 2009, 2010թթ. գիտաժողովների նյութերի հրատարակված ժողովածուները: Համալսարանի ներկայացուցիչները մասնակցում են ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում կազմակերպված մի շարք գիտաժողովների:Համալսարանի հետազոտական գործունեությանը մասնակից են նաև ուսանողները, ովքեր դասախոսների ղեկավարությամբ ձեռք են բերում գիտական աշխատանք կատարելու հմտություններ: Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հրատարակվել են մենագրություններ, մի շարք դասախոսներ պաշտպանել են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, իսկ ոմանք ստացել են դոցենտի կոչում:

Համալսարանի ռազմավարական ծրագրում նախատեսված է ընդլայնել գիտահետազոտական ուղղությամբ աշխատանքը:

Քանի որ Հյուսիսային համալսարանը գիտահետազոտական ՄՈՒՀ չէ, ուստի գիտական հետազոտությունների իրականացման ոլորտում նրա հավակնությունները բարձր չեն: Որպես այդպիսին, հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն համալսարանը չունի:

Ինչպես ցույց տվեց փորձագիտական այցը, գիտական հետազոտությունների ոլորտներն այժմ իրատեսորեն սահմանված են: Արդյունքներ են արձանագրված թումանյանագիտության և գենդերային հետազոտությունների ոլորտներում:

Կապը գիտական հետազոտությունների և կրթականծրագրերի միջև թույլ է: Ամբիոնները, մեծ մասամբ, ընդունում են անդամների հետազոտական թեմաներն ի գիտություն և հետամուտ չեն լինում ելքային արդյունքներին:

[illegible] [illegible]

Թումանյանագիտության և գենդերային հետաքրքրությունների շրջանակներում ՄՈՒՀ-ը բավական արդյունքներ է ձեռք բերել և շարունակում է իրականացնել հետնողական աշխատանք: ՄՈՒՀ-ըգիտակցումէ, որնշված փաստերը դրական գործելակերպի օրինակներ են, սակայն դրանք բավարար չեն համալսարանի հետազոտությունների ոլորտում աշխատանքը բավարար համարելու համար: Համալսարանում

հետազոտություններիզարգացմաննունորարարությունեերիննպաստող հատուկ քաղաքականություն չի տարվում, սակայն հաստատությունում իրականացվում են գործընթացներ, որոնք նպաստում են հետազոտությունների զարգացմանը:

ՄՈՒՀ-ում մշակված չեն ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների քաղաքականությունն ու ընթացակարգերը:

Հետազոտությունների իրականացման և այս ուղղությամբ իր զարագացումն ապահովելու տեսակետից ՄՈՒՀ-ը դեռևս գտնվում է պլանավորման վաղ փուլում: Մասնավորապես, այս ոլորտը դեռևս հստակորեն կանոնակարգված չէ:

ՄՈՒՀ-ը գիտակցում է այս ասպարեզում իր գործունեության թույլ լինելը և պլանավորում է քայլեր ձեռնարկել դրա շտկման ուղղությամբ:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ցանկալի կլինի հետազոտության ոլորտում մշակել երկարաժամկետ ռազմավարություն: Ընդ որում, հետազոտությունների իրականացումը ճիշտ կլինի կազմակերպել նախապես մշակված քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Հետազոտական ոլորտում համալսարանի հետագա հաջողությունները որոշ չափով պայմանավորված են ամբիոններում պարբերական գիտակրթական սեմինարների կազմակերպմամբ, որոնցում ընդգրկված կլինեն ինչպես ամբիոնների աշխատակիցները, այնպես էլ ուսանողները: Ընդ որում, այս հարցում օգտակար կլինի կիրառել ՊԻՍԲ ցիկլը. անհրաժեշտ է պլանավորել սեմինարները՝ խմբավորելով ըստ թեմաների, իրականացնել ապահովելով ՊԴ կազմի և ուսանողների ներկայացուցիչների մասնակցությունը, վերլուծել ամեն սեմինարի արդյունավետությունը տարբեր տեսանկյուններից, այդ թվում՝ ամբիոնում տվյալ գիտահետազոտական ուղղության զարգացման հնարավորության, հետաքրքրության

և նպատակահարմարության տեսանկյունից, ապա նաև բարելավել ամբիոնի և կոնկրետ դասախոսների գիտական գործունեությունը, հաշվի առնելով բոլոր կարծիքները: Արդյունավետության բարձրացման համար կարելի է սեմինարին հրավիրել արտաքին մասնագետներ:

Քանի որ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի որոշ անդամներ համարում էին, որ արտերկրում հրատարակություններ ունենալը կապված է ֆինանսական խնդիրների հետ, ապա կարելի է նախանշել հարցի լուծմանը նպաստող հետևյալ մոտեցումը: Որոշ դեպքերում, եթե դասախոսների կողմից իրականացված հետազոտական աշխատանքները գիտական լուրջ հետաքրքրություն են ներկայացնում և արժանի են արտերկրում հրապարակման, ապա համալսարանը կարող է նրանց նյութական խրախուսման որոշում կայացնել: Թեև սա հարցի համակարգային լուծում չէ, բայցևայնպես համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական միտքը միջազգայնացնելու ուղղությամբ օգտակար քայլ է:

Հաշվի առնելով, որ համալսարանի հիմնական հետազոտական ուղղությունը հայագիտական է, ապա կարելի է փորձել գիտական կապեր հաստատել սփյուռքում գործող հայագետների հետ, ինչու ոչ, նաև՝ այլազգի հայագետների հետ, որոնց գիտական հետաքրքրության շրջանակներում է, օրինակ Թումանյանի գրական ժառանգությունը: Համալսարանում ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների քաղաքականության ու ընթացակարգերի ստեղծման և ներդրման խնդիրը նույնպես կարող է լուծման:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը դիտարկման արդյունքում հանգեց այն եզրակացության, որ սույն չափանիշի շրջանակներում ՄՈՒՀ-ի իրականացրած գործունեությունը կարելի է գնահատել մասամբ բավարար:

[illegible]

ՉԱՓԱՆԻՇ 7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր ստեղծելու ուղղությամբՄՈՒՀ-ն իրականացրել է որոշակի անհրաժեշտ գործողություններ: Մասնավորապես, համալսարանի շենքի 6-րդ հարկը կառուցվել է հիմնադիրների ուժերով: Հաստատությունում գործում են 4 համակարգչային լաբորատորիաներ, որոնք հնարավորություն են ընձեռում համալսարանի ուսանողներին ձեռք բերել համակարգչային գիտելիքներ և ազատորեն օգտվել տեղեկատվական տեխնիկայից: Հաստատության համակարգիչների մոտ 80%-ը միացած է համացանցին: Համալսարանի շենքի 4-րդ հարկում կա անլար Wi-Fi կապի հնարավորություն: Ինտերնետ կապի հնարավորությունը օգտագործվում է ինֆորմատիկայի դասընթացի համապատասխան մասի կազմակերպման համար: Համալսարանի շենքն օգտագործվում է երկհերթ ռեժիմով: Համալսարանն ունի հարմարավետ նիստերի դահլիճներ: Կա նաև մարզասրահ և բուֆետ, որոնց պայմանների բարելավման կարիք կա:Համալսարանում գործում է բուժկետ, ուր օրական այցելում են միջին հաշվով 5-6 ուսանող:

Գրադարանն իրենից ներկայացնում է ոչ մեծ, բայց եղած ֆոնդային ռեսուրսների սահմանում բնականոն գործող կառույց: Համալսարանը որոշակի քայլեր իրականացնում է գրադարանային ֆոնդի համալրման ուղղությամբ: Բացը լրացնելու բավականին գործուն միջոց է Ազգային և Ավ. Իսահակյանի անվան քաղաքային կենտրոնական գրադարանի հետ կնքված պայմանագրերի շրջանակներում իրականացվող համագործակցությունը:

Համակարգչային լաբորատորիաները հագեցած էին ժամանակակից համակարգիչներով և ուսանողների գնահատմամբ, դրանք լիովին բավարարում էին իրենց ուսումնական գործընթացում: Կրիմիլալիստիկայի լաբորատորիան ևս կարևոր դեր է խաղում տվյալ ՄԿԾ-ի պատշաճ իրականացման գործում: «Վերնատուն» թումանյանագիտական կենտրոնն ակտիվ և արդյունավետ կերպով գործող օղակ է,

Th. M. Stuck

որտեղ ակնհայտ է դասախոս-ուսանող համագործակցական կապը: Համալսարանում գործում է նաև Անդրանիկ Մարգարյանի անվան կաբինետը:

Տեղեկատվական միասնական ցանցի առկայությունը հեշտացնում է փաստաթղթաշրջանառությունը հաստատությունում:

Ընդհանուր առմամբ, փորձագիտական հետազոտությունը ցույց տվեց, որ ՄԿԾ-երի իրականացման համար ՄՈՒՀ-ն ունի որոշակի ռեսուրսներ:Ներքին շահակիցները գոհ են ՄՈՒՀ-ի շենքային պայմաններից, սանիտարական վիճակից, ջեռուցման և այլ ծառայություններից: ՄԿԾ-ի արդյունավետ իրականացման տեսակետից ավելի աննպաստ տպավորություն թողեց լինգաֆոնային կաբինետը, որն ունի լեզուների ուսուցման ժամանակակից պահանջները բավարարելու խնդիր:

Ընդհանուր առմամբ, մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի ստեղծման առումով ՄՈՒՀ-ը պլանավորել և իրականացրել է մեծածավալ աշխատանք, սակայն դեռևս անելիքներ կան ՊԻՍԲ շրջափուլի վերջին բաղադրիչի՝ բարելավման տեսանկյունից:

ՄՈՒՀ-ի սեփականատերերը կատարում են համապատասխան ֆինանսական ռեսուրսների հատկացումներ՝ համալսարանի ռազմավարական նպատակներին հասնելու հնարավորությունը ապահովելու համար:Չնայած այն հանգամանքին, որ ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազայի զարգացման ուղղությամբ տարիների ընթացքում զգալի տեղաշարժ է գրանցվել, այդուհանդերձ, ինչպես նշված է ինքնավերլուծությունում, դեռևս ռեսուրսներով ապահովվածությունը բավարար չէ:

ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան այնպիսին է, որ, ըստ էության, հնարավորություն է ընձեռում համալսարանի նպատակների ու խնդիրների, ինչպես նաև ՄԿԾ-ների իրականացման համար: Փորձագիտական խումբը համալսարանում չգրանցեց ռեսուրսներին վերաբերող որևէ հանգամանք, որը կարող էր լրջորեն խոչընդոտել կրթական գործընթացի արդյունավետ իրականացմանը: Համալսարանի ՌԾ-ի շարունակական բարելավման և կայունության պահպանման համար անհրաժեշտություն կա ռեսուրսների շարունակական բարելավման և նոր ռեսուրսներով համալրման:

Առողջությանանվտանգությանպահպանմանն ուղղվածծառայությունների ընթացակարգերը ներկայացված են Համալսարանի բաղպաշտպանության

պլանում:Հյուսիսային համալսարանի ՔՊ համադասողը սերտորեն համագործակցում է ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Երևանի "Կենտրոն" վարչական շրջանի փրկարար ծառայության հետ: Հատուկ կարիքներով անձանց առողջության և անվտանգության պահպանման հետ կապված համալսարանում հատուկ քաղաքականություն և ընթացակարգեր չկան, սակայն այդպիսի անձինք գտնվում են համալսարանի ղեկավար սուբյեկտների հատուկ ուշադրության ներքո:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներդեռևս մշակված չեն: ՄՈՒՀ-ը ներկայումս գիտակցում է, որ գնահատման մեխանիզմների մշակման կարիք կա:

Թեև ռեսուրսային բազան, ընդհանուր առմամբ, նպաստավոր պայմաններ է ապահովում ուսումնական միջավայրի ստեղծման և ՄՈՒՀ-ի առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար, հասանելի է ինչպես ուսանողությանը, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմին, սակայն գնահատման մեխանիզմների բացակայությունը գործընթացները տարերային դարձնելու վտանգ է իր մեջ պարունակում:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այս չափանիշի շրջանակներում անհրաժեշտ է ստեղծել մի շարք ընթացակարգեր, որոնք կնպաստեն գործընթացների կառավարման բարելավմանը:Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակումը կնպաստի համալսարանում բարվոք ուսումնական միջավայր ստեղծելու գործին:

Համալսարանը կշահի կրթության որակի ապահովման տեսանկյունից, եթե ֆինանսական քաղաքականության հարցերի պլանավորման, իրականացման, որոշ հարցերում մշտադիտարկման և բարելավման գործընթացներին սեփականատերը ներգրավի համալսարանի կառավարման բարձր և միջին օղակների ներկայացուցիչներին:

Mr. M. Schuß

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը դիտարկման արդյունքում հանգեց այն եզրակացության, որ սույն չափանիշի շրջանակներում ՄՈՒՀ-ի իրականացրած գործունեությունը կարելի է գնահատել մասամբ բավարար:

ՉԱՓԱՆԻՇ 8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Համալսարանում ավանդաբար ընդունված է և կիրառվում է ստորաբաժանումների պարբերական հաշվետվողականություն:Ներքին հաշվետվությունները պարբերաբար տպագրվում են Հյուսիսային համալսարան" թերթում: Մշակված են հաշվետվողականության առանձին մեխանիզմներ, իսկ արտաքին շահակիցների առումով, հասարակությանը տրամադրվող ծառայությունների հատուկ մշակված ռազմավարություն և քաղաքականություն չկա: Այդուհանդերձ, կան արտաքին հաշվետվողականության բազմաթիվ փաստեր: ՄՈՒՀ-ը մասնակցում է կրթության ոլորտում օրինաստեղծ գործունեությանը: ՄՈՒՀ-ի ռեկտորը ոչ պետական համալսարանների միության նախագահն է: Իր գոյության 16 տարիներից վերջին ութ տարիների ընթացքում ՄՈՒՀ-ը յոթ պետական բուհերի շարքում ընդգրկված է ՀՀ խոշոր հարկատուների ցանկում: Սա օգտագործած ռեսուրսների համար պետությանը և հասարակությանը հաշվետու լինելու լավ օրինակ է:

Ինչ վերաբերում է ներքին հաշվետվողականությանը, ապա համալսարանում որպես ավանդույթ ձևավորվել է ֆակուլտետների դեկանների ընթացիկ և տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև ուսման որակի և ավարտական /պետական/ քննությունների հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները: Մինչ այժմ համալսարանում չի կիրառվել ռեկտորի տարեկան հաշվետվությունների պրակտիկան: Փորձագիտական խմբի այցելության օրերին ՄՈՒՀ-ի ռեկտորն արդեն մշակել էր իր տարեկան հաշվետվության նախագիծը և պատրաստվում էր առաջիկայում այն ներկայացնել համալսարանի գիտական խորհրդին:

ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների դեկավարները ընթացիկ և տարեվերջյան հաշվետվություններ են ներկայացնում կառավարման կոլեգիալ մարմիններին

Th. M. Shaff.

/գիտխորհուրդ, ուսումնամեթոդական խորհուրդ, ֆակուլտետային խորհուրդներ, ամբիոններ/: ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների պարբերական վերընթաց հաշվետվողականության առկայությունն ինքնին անհրաժեշտ և կարևոր լինելով հանդերձ չի փոխարինում վայրընթաց հաշվետվողականության անհրաժեշտությունը, քանի որ խզում է հետադարձ կապի սկզբունքը: Այդ մասին հիշատակություն չկա նաև համալսարանի կանոնակարգում: Այդուհանդերձ, ՄՈՒՀ-ը հաշվետվողականության մեխանիզմի բարելավումն իրականացնում է ՊԻՍԲ ցիկլին հետևելով:

ՄՈՒՀ-ը, որպես խոշոր հարկատու հանդես է գալիս հասարակության առջև որպես սոցիալական պատասխանատվություն կրող հաստատություն:

Թեև հաստատության կողմից հասարակությանը տրամադրվելիք հատուկ հաշվետվությունների կարգ չկա, ՄՈՒՀ-ի կայքէջը, թերթը, ամսագիրը, ֆեյսբուքի էջը, ռեկտորի պարբերաբար տեղի ունեցող հրապարակային ելույթները, մամուլում նրա հրապարակումները որոշակիորեն ծառայում են համալսարանի գործընթացները հասարակության համար թափանցիկ և հասանելի դարձնելուն: Պետք է արձանագրել, սույն չափանիշի ապահովման հարցում մեծ է անձամբ ՄՈՒՀ-ի ռեկտորի դերը, որի հասարակական-քաղաքական բարձր ակտիվության շնորհիվ հասարակության առջև զգալիորեն թափանցիկ և հասանելի է դարձել հաստատության գործունեությունը: կայքը, որն արդեն ապահովում է հանրության հետ փոխադարձ կապը:

Վերջին շրջանում, փաստորեն, ՄՈՒՀ-ն ակտիվացրել է իր քայլերը՝ հասարակության շրջանում իր տրամադրած կրթության, ռեսուրսների օգտագործման գործընթացների թափանցիկության և հասանելիության քաղաքականություն վարելու ուղղությամբ: Ինչ վերաբերում է իրականացրած հետազոտության արդյունքների հասանելիության ապահովման խնդրին, ապա այստեղ որոշակի դեր է պատկանում պարբերաբար կազմակերպվող գիտաժողովներին և հրատարակված ժողովածուներին:

Հասարակության հետ հետադարձ կապի ապահովողը <<Հյուսիսային համալսարան>>պաշտոնաթերթն է, որը համալսարանում տեղի ունեցած տարաբնույթ միջոցառումների վերաբերյալ նյութեր է հրապարակում: Լրատվության և հասարակության հետ կապերի նորաստեղծ բաժինը մշակել է մի ծրագիր, որը թույլ

[illegible] [illegible]

է տալիս իրականացնել արտաքին և ներքին շահակիցների հետ համագործակցությունը:

ՄՈՒՀ-ը հանրության հետ հետադարձ կապի միջոցներից առավել գործուն է համարում պարբերաբար կիրառվող <<Գովազդային արշավներ ԶԼՄ-ներով>>միջոցառումը:ՄՈՒՀ-ում հասարակության հետ կապերի ձևավորմանը միտված հետադարձ կապի մեխանիզմներ, որպես այդպիսիք, ձևավորված չեն: Չկա մշակված քաղաքականություն և ընթացակարգեր: Այժմ այդ ուղղությամբ կատարվում են առաջին փորձերը:

Ամսագիրը, պարբերական այլ հրատարակումներ, համալսարանի կայքէջը, ֆեյսբուքի էջը նպաստում են սույն չափանիշի իրականացմանը, սակայն բավարար չեն այն լիովին իրականացնելու համար: ՄՈՒՀ-ը գիտակցում է, որ հասարակական կարծիքի ուսումնասիրման և գնահատման ուղղությամբ դեռ շատ անելիքներ ունի: Նախատեսվում է ակտիվ աշխատանքներ տանել ԶԼՄ-երի հետ, որը պլանավորվում է իրականացնել համալսարանի լրագրող շրջանավարտների հետ համագործակցությամբ:

Հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման քաղաքականությունն ու ընթացակարգերը բացակայում են, ուստի բացակայում են նաև հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների ներքին և արտաքին գնահատման գործիքները: Լրացուցիչ կրթության ենթակառուցվածքային ստորաբաժանումը պասիվ է գործում: ՄՈՒՀ-ը գիտակցում է, որ լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների հարցում իր արդյունավետությունը բարձր չէ:

Համալսարանի գործունեության ուժեղ կողմերից մեկը պետք է համարել հասարակությանն արժեքներ փոխանցելու գործառույթի հաջող իրականացումը: Սկսած իրականացվող բազմաբնույթ միջոցառումներից, մինչև անցյալի և ներկայի ազգային և հասարակական գործիչների մասին տեղեկատվական նյութերի տարածումը, ուսումնական կաբինետների առկայությունը, դրանց անվանումները և այլն՝ ըստ էության՝ միտված են արժեքային համակարգի փոխանցմանը և ուսանողների շրջանում դրանց արմատավորմանը:

Th. [illegible] Schneß.

Ուսումնական պլաններում ներառված են այնպիսի առարկաներ, որոնք հասարակության համար կրթում են դաստիարակված, հայրենասեր և բարձր արժեքներ կրող քաղաքացիներ /«Հայոց պատմություն», «Քաղաքագիտություն», «Մշակութաբանություն», «Գենդեր և իրավունք» և այլն/: Համալսարանի դավանած արժեքների շարքում առաջնային տեղ ունի հայրենասիրությունը: Բանակից զորացրվածները վճարովի համակարգում օգտվում են զեղչի իրավունքից, իսկ գերազանցությամբ սովորելու դեպքում նրանց տրվում է Վազգեն Սարգսյանի անվան կրթաթոշակ:

Համալսարանն ակտիվ մասնակցություն է դրսևորում բաղաքապետարանի կողմից կազմակերպված ցանկացած միջոցառմանը, ուսանողները այցելություններ են կազմակերպում մանկատներ, տուն-ինտերնատներ: Սրանք արժեքներ են, որ կրթում են երիտասարդներին և նրանց փոխանցում մարդասիրական և ազգային բարձր գաղափարներ՝ ձևավորելով քաղաքացիական բարձր գիտակցություն ունեցող երիտասարդ սերունդ: Ողջ վերոշարադրյալը վկայում է այն մասին, որ ՄՈՒՀ-ը իրականացնում է իր առաքելության մեջ նշված ազգային արժեքների և ավանդույթների պահպանմանն ուղղված կրթադաստիարակչական գործառույթը: Շնորհվում են վկայականներ, շնորհակալագրեր, որոնց հիման վրա ապագայում կարելի է գնահատման գործընթաց իրականացնել:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ցանկալի է հասարակության շրջանում իրականացնել հարցում՝ պարզելու համար համալսարանի գործունեության մասին հանրային տեղեկացվածության աստիճանը, առկա պատկերացումների համընկնումը համալսարանում առկա իրողությունների հետ և այլն: Այդպիսի տվյալներ կարելի է ստանալ նաև համացանցում ակտիվ աշխատանք իրականացնելու ճանապարհով, սոցիալական ցանցերում հարցումներ կատարելով և այլն:

Խնդրո առարկա չափանիշի ուղղությամբ իրականացված և իրականացվելիք ծավալուն և բազմաբնույթ աշխատանքները արժե դասակարգել ըստ դրանց արժեքային ուղղվածության, համակարգել, ձևակերպել հետապնդվող նպատակները, դրանց հիմքում դնել հստակ մեխանիզմներ, ստուգել արդյունավետության աստիճանը: Այս ամենը կնպաստի, որպեսզի համալսարանի կողմից իրականացվող գնահատանքի արժանի աշխատանքները տեսանելի դառնան և ընդգրկվեն ՄՈՒՀ-ի

Ch. M. Schuch

կողմից տարվող գործունեության մեջ՝ դառնալով դրանց օրգանական բաղադրամասը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը դիտարկման արդյունքում հանգեց այն եզրակացության, որ սույն չափանիշի շրջանակներում ՄՈՒՀ-ի իրականացրած գործունեությունը կարելի է գնահատել մասամբ բավարար:

ՉԱՓԱՆԻՇ 9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Արտաքին կապերը խրախուսող քաղաքականություն և ընթացակարգեր ՄՈՒՀ-ը չունի: Միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը մշակման փուլում է: Չնայած այդ հանգամանքին, 2011 թ.-ին ստեղծվել է արտաքին կապերի ստորաբաժանումը և գրվել է արտաքին կապերի կանոնակարգի նախագիծը: Համալսարանը համագործակցության պայմանագիր է կնքել Լեհաստանի "Ադամ Միցկևիչ" համալսարանի հետ: 2010 թվականին Սանկտ-Պետերբուրգի կառավարման և էկոնոմիկայի համալսարանի հետ կնքված պայմանագիրը ուսանողների և դասախոսների փոխանակման ու գիտամեթոդական համագործակցության հնարավորություն է ընձեռում: Սանկտ-Պետերբուրգի Հյուսիս-Արևմտյան պետական տեխնիկական համալսարանի հետ «Կրթական և գիտատեխնիկական համագործակցության մասին պայմանագրի» շրջանակներում երկու համալսարանների աշխատակիցները մասնակցել են միմյանց գիտաժողովներին, տեղի են ունեցել երկու համալսարանների դեկավար աշխատողների և դասախոսների փոխայցելություններ:

Արձանագրված փաստից ելնելով կարելի է հավաստել, որ ՄՈՒՀ-ն առաջին քայլերն է կատարում արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականության և ընթացակարգերի մշակման ուղղությամբ: Սակայն դա բավարար չէ արտաքին կապերի զարգացման համար: Միջազգայնացման խորացման համար կան ֆինանսական և լեզվական հիմնախնդիրներ: վերջին խնդրի լուծման

Ch. MN Schuch.

համար համալսարանը կազմակերպել է դասախոսների վերապատրաստում օտար լեզվի դասավանդման ուղղությամբ:

ՄՈՒՀ-ում վերջերս ստեղծված արտաքին կապերի բաժնի գործառույթներն են արտաքին կապերի ստեղծումը, դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը, արտաքին կապերի կառույցի ձևավորումը: ՄՈՒՀ-ի արտաքին կապերի բաժնի գործունեությունը կարգավորող ընթացակարգերը դեռևս մշակման փուլում են: ՄՈՒՀ-ը ներկայացրել է բազմաթիվ դրամաշնորհային հայտեր և շահել է մեկը:

Արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման նորաստեղծ ենթակառուցվածքը դեռևս չունի ռեսուրսներ, որոնց վրա հիմնվելով հնարավոր կլիներ ՄՈՒՀ-ի միջազգայնացմանը թափ հաղորդել և մտնել կանոնակարգված և ակտիվ գործընթացի մեջ: Ֆինանսական շոշափելի ներդրումներ պահանջող այս ոլորտի զարգացումը բախվում է դժվարությունների հետ, որի հետևանքով կնքված համաձայնագրերը վատ են գործում:

ՄՈՒՀ-ը մի շարք ոլորտներում հաջողությամբ համագործակցում է տեղական հաստատությունների հետ /այլ համալսարաններ, գրադարաններ, կազմակերպություններ և այլն/: Միջազգային հաստատությունների հետ համագործակցությունը բախվում է ֆինանսական և մարդկային ռեսուրսների հետ կապված դժվարությունների հետ, որի հետևանքով համագործակցությունը դառնում է պասիվ ու ձևական բնույթ է ստանում:

Ամփոփելով ողջ վերոշարադրյալը, կարող ենք եզրակացնել, որ չնայած իրականացրած որոշակի քայլերին, ՄՈՒՀ-ն արտաքին կապերի հաստատման հարցում դեռևս գտնվում է մեկնարկային փուլում և դեռևս վաղ է խոսել հաստատության միջազգայնացման և փորձի փոխանակման ասպարեզներում գրանցված շոշափելի արդյունքների մասին:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Քանի որ համալսարանի արտաքին կապերի աշխուժացման և միջազգայնացման խնդիրների լուծումը մեծապես պայմանավորված է դրանք խրախուսող քաղաքականության և ընթացակարգերի առկայության հետ, ապա խորհուրդ է տրվում առաջնահերթ կերպով աշխատանքներ տանել հենց այդ ուղղությամբ: Խնդրի նկատմամբ իրատեսական կոնցեպտուալ մոտեցման

Mr. MV Schmidt.

ուրվագծումը հնարավորություն կտա անցում կատարել այն կյանքի կոչելուն ուղղված համակարգված գործնական քայլերի իրականացմանը:

Արտաքին կապերի բաժնի աշխատանքն առավել արդյունավետ կլինի, եթե այն համակցվի Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, կայքէջի և ֆեյսբուքի պատասխանատուների, թերթի և ամսագրի խմբագրության հետ: Միջազգային գործընկերային կապերի հաստատման արդյունավետությանը կարող է նպաստել այս հարցում արտաքին շահակիցների, մասնավորապես՝ գործատուների հետ համագործակցությունը: Ֆինանսական շոշափելի ներդրումներ պահանջող այս ոլորտի զարգացման համար հարկավոր է ակտիվացնել տեղական և արտասահմանյան հովանավորների որոնման աշխատանքները, ակտիվորեն մասնակցել դրամաշնորհային ծրագրերի: Այս հարցում հաջողությամբ գործելուն կօգնի արտաքին կապերի բաժնի աշխատակցի մասնակցությունը դրամական միջոցների հայթայթման դասընթացների /fondraising/.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը դիտարկման արդյունքում հանգեց այն եզրակացության, որ սույն չափանիշի շրջանակներում ՄՈՒՀ-ի իրականացրած գործունեությունը կարելի է գնահատելմասամբ բավարար:

ՉԱՓԱՆԻՇ 10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՄՈՒՀ-ում առկա են որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր: ՄՈՒՀ-ում գործում է որակի ապահովման վարչություն իր հաստիքային աշխատողներով, որակի ապահովման ցանցային համակարգի ստեղծումն ընթացքի մեջ է: Համալսարանը հրատարակել է որակի ապահովման ուղեցույց, որի նպատակն է ներքին շահակիցների տեղեկացվածվության բարձրացումը: Անցկացվել են ՈԱԿ-ի հանձնաժողովների անդամների մի մասի վերապատրաստման դասընթացներ: Այլընտրանքային ներքին աուդիտորական մոտեցումները ապահովելու նպատակով ձևավորել է ուսանողական շարժում:

Ուսանողական հանձնաժողովը նույնիսկ ձեռք է բերել հարաբերական ինքնուրույնություն և մեծ օժանդակություն է ցուցաբերել որակի ապահովման մեխանիզմների ձևավորման գործում և ընթացակարգերումՊարբերաբար տեղի են ունենում որակի ապահովման տեխնիկական հանձնաժողովի ժողովները:Որակի ապահովման ուսումնամեթոդական հանձնաժողովի ձևավորումը համեմատաբար դանդաղ է ընթացել:

Կարելի է արձանագրել, որ որակի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի, որակի ապահովման ուղեցույցի գոյությունը, ինչպես նաև վարչության հանձնաժողովների անդամների վերապատրաստումը սույն չափանիշի բավարարմանը նպաստող գործոններ են:Ուսանողների ներգրավումը որակի ապահովմանը միտված գործընթացներին նպաստավոր է չափանիշի բավարարման տեսանկյունից: Որակի ապահովման քաղաքականությունն անցումային շրջանի համար իրատեսական է:ՄՈԻՀ-ում որակի ապահովման ներքին համակարգը կարելի է համարել էապես ձևավորված և զարգացման ներուժ ունեցող: Համեմատաբար կարճ ժամանակահատվածում համալսարանը կարողացել է ստեղծել որակի ապահովման քաղաքականություն ու անհրաժեշտ ընթացակարգեր: Որակի վարչության աշխատակիցներն անցել են համապատասխան վերապատրաստում, որն աներկբայորեն նպաստել է, որպեսզի համալսարանում որակի ապահովման նոր և բարդ գործընթացը գրագետ մեկնարկ ու ընթացք ունենա: ՄՈԻՀ-ը հասցրել է հրատարակել որակի ապահովման ուղեցույցը, համալսարանի բոլոր ստորաբաժանումներն ընգրկվել են որակի ապահովման գործընթացի մեջ: Գնահատանքի արժանի է նաև այն իրողությունը, որ ուսանողները լավ տեղեկացված են համալսարանում տեղի ունեցող որակի ապահովման գործընթացների մասին, իսկ նրանց մի մասը ակտիվորեն ներգրավված է տարվող աշխատանքներում: Որակի ապահովման գործունեության մասին տեղեկացվածության գնահատում է կատարվել ֆոկուս խմբերի օգնությամբ, որից ստացված արդյունքների գնահատմանը հետևել է բարելավումը: Այս հարցում, ըստ էության, համալսարանը գործել է ըստ ՊԻՍԲ շրջափուլի:

Անցումային շրջանի համար որակի ապահովման՝ ՄՈԻՀ-ում մշակված քաղաքականությունը և ընթացակարգերը բավականին արդյունավետ են:Ընդլայնվել

Michel Stuck.

է գործընթացներում ընդգրկված շահակիցների շրջանակը և հետաքրքրությունը նոր գործընթացների նկատմամբ. այսինքն կարելի է ենթադրել, որ համալսարանում որակի ապահովման համար շարժումը մեկնարկել է և անցել է ձևավորման որոշակի ճանապարհ:

Որակի ապահովման կառույցին ֆինանսական միջոցներ տրամադրելու վերաբերյալ գիտխորհուրդը որոշում է կայացրել և այդ միջոցներըտրամադրվում են ըստ պահանջի՝ ներկայացված գեկուցագրերի հիման վրա: Որակի ապահովման վարչությունն ունի կահավորված սենյակ, հատկացվել է 3 համակարգիչ, տրամադրվել է 4 հաստիք: Սակայն ֆինանսական ռեսուրսները բավարար չեն որակի ապահովման գծով վերապատրաստման դասընթացների անցկացման և փորձագետներ հրավիրելու համար:Ինքնավերլուծությունում նշված է, որ որակի ապահովման գործընթացների համար շատ սուղ են ժամանակային ռեսուրսները: Հանձնաժողովների ոչ բոլոր անդամներն էին ընդգրկված աշխատանքներում, անցումային փուլի համար նման պատկերը շատ բնութագրական է և հասկանալի: 2012 թ.-ին համակազմը ընդլայնվեց ի հաշիվ շրջանավարտների ներգրավման: Այսպիսով լուծվեց որակի ապահովման գործընթացների կազմակերպման համար համալսարանում մարդկային ռեսուրսների քանակական ապահովվածության խնդիրը: Այսինքն, մարդկային ռեսուրսները բավարարելու հարցում գործել է ՊԻՍԲ շրջափուլի համաձայն:

Ողջ վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՄՈՒՀ-ը ամենայն լրջությամբ է մոտեցել որակի ապահովման գործընթացներին և ստեղծել է ակտիվ աշխատող մի կառույց՝ Որակի վարչությունը, որն անցնելով պրոֆեսիանալ կարողությունների ձևավորման դժվարին ճանապարհ՝ դարձել է որակի ապահովման հարցերում ձեռնահաս և կարող մի կառույց: Այս հարցում մեծ է ՄՈՒՀ-ի վարչակազմի դերը, քանի որ կառույցին ի սկզբանե տրվել են բոլոր հնարավորությունները՝ իր գործունեությունն արդյունավետ կերպով իրականացնելու համար:

Ինչ վերաբերում է՝ որակի ապահովման գործընթացում արտաքին շահակիցների (համալսարանի հետ համագործակցող գործատուներ, գիտահետազոտական հաստատություններ, բուհի շրջանավարտներ եւ այլն) ներգրավվածությանը, ապա

M. M. Stuch.

այն արտահայտվում է համալսարանի կողմից ներգրավման անհրաժեշտության գիտակցմամբ: Այս կապակցությամբ հիշատակության արժանի է նաև այն, որ արտաքին շահակիցները մասնակցել են ՌԾ վերանայման գործին: ՄՈՒՀ-ի առաքելության ձևակերպման մեջ արված որոշ փոփոխություններ ևս արտաքին շահակիցների հետ համագործակցության արդյունքում են տեղի ունեցել:Արտաքին շահակիցների ներգրավվաության ուղղությամբ ՄՈՒՀ-ի իրականացրած գործողությունները գտնվում են պլանավորման կամ մասնակի իրականացման փուլում:

Արդյունավետ է ընթանում համագործակցությունը ՈԱԱԿ-ի հետ, որն արտահայտվում է խորհրդատվության տրամադրմամբ:Քանի որՄՈՒՀ-ի որակի ապահովման համակարգը դեռ նոր է ձևավորվել՝ վերանայման հարցերը զուգահեռ են ծագում: Կարճ ժամանակահատվածում մի քանի անգամ փոփոխություն են կրել որակի ապահովման ուղեցույցը, տարատեսակ հարցաթերթիկներ, ստեղծվել են և նորացվել մի քանի տասնյակ ընթացակարգեր: Ներկայումս համալսարանում որակի ապահովման համակարգի վերանայումները դարձել են պարբերական և անհրաժեշտության դեպքում շտկումներ են մտցվում:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ցանկալի է, որպեսզի շահակիցների տեղեկացվածության աստիճանի վերաբերյալ տվյալների ստացումը հիմնված լինի հետադարձ կապի մեխանիզմների պարբերական կիրառման վրա: Սա կնպաստի որակի ապահովման ներքին համակարգի օբյեկտիվ, իրատեսական և արդյունավետ շարունակական գործունեությանը:

Կարելի է բենչմարքինգի համաձայնագրերի շրջանակներում ՄՈՒՀ-ի որակի ապահովման ինքնավերլուծությունը ամբողջությամբ կամ հատված առ հատված հանձնել արտաքին փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական խումբը դիտարկման արդյունքում հանգեց այն եզրակացության, որ սույն չափանիշի շրջանակներում ՄՈՒՀ-ի իրականացրած գործունեությունը կարելի է գնահատել բավարար:

Փորձագիտական խմբի ղեկավար՝
Յ. Քալանթարյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՐԻՆԵ ՆԱԼՉԱՋՅԱՆ

Ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների բաժինը՝ ստանալով ֆրանսերեն լեզվի և գրականության դիպլոմավորված մասնագետի որակավորում: Այնուհետև սովորել է Վ. Բրյուսովի անվ. ԵրՊԼՀ ասպիրանտուրայում՝ <<Հոգեբանություն>> մասնագիտությամբ: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1989թ. Վ. Լոմոնոսովի անվ. Մոսկվայի պետական համալսարանում: Աշխատել է Վ. Բրյուսովի անվ. ԵրՊԼՀ հոգեբանության ամբիոնում նախ որպես դոցենտ, իսկ այնուհետև՝ որպես ամբիոնի վարիչ: Ողջ աշխատանքային գործունեության ընթացքում պարբերաբար համատեղության կարգով դասավանդել է ՀՀ մի շարք պետական և ոչ պետական ԲՈՒՀ-երում: 1999-2004թթ. եղել է <<Տաթև>> գիտակրթական համալիրի <<Մանկավարժական միտք>> հանդեսի խմբագրական խորհրդի անդամ, <<Հոգեբանությունը և կյանքը>> հանդեսի գլխավոր խմբագիր: Ներկայումս Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հոգեբանության և մանկավարժության ցիկլի վարիչն է: Միաժամանակ ղեկավարում է <<Մեկնություն>> հոգեբանական հետազոտությունների կենտրոն ՀԿ-ն, որի շրջանակներում հեղինակել և ղեկավարել է մի շարք հետազոտական ծրագրեր: Եղել է Ջ. և Ք. Մակարթուրների ֆոնդի հետազոտող:

Թվով 4 մենագրության և 44 գիտական հոդվածների հեղինակ է, որոնց մի մասը հրատարակվել է արտերկրի գիտական հանդեսներում:

ՋԱԳԱՆՆԱԹ ՓԱԹԻԼ

Dr. Jagannath Patil is the President of Asia Pacific Quality Network (APQN), the largest regional network of QA bodies from over 40 countries. An internationally recognized quality assurance professional, Dr. Patil serves as Deputy Adviser at National Assessment and Accreditation Council of India.

Dr JP has served as consultant on various national and international missions including that of UNESCO, World Bank, etc. As experienced QA Professional of the leading

QA agency and Board member of APQN for several years, he has shared his QA expertise to many HEIs and QAAs across the world. *His key assignment was as consultant on UNESCO/ World Bank mission to Association of African Universities- AAU, Accra to help capacity building initiative of emerging African* QA Network. He led an international Project group on 'Student Participation in Quality Assurance' under the auspices of Asia Pacific Quality Network-APQN. As the APQN Vice- President he is Chair of the Finance Committee and provides oversight to several Projects of APQN funded by GIQAC under auspices of UNESCO and World Bank. In June 2012, Dr JP was invited as Chair of international panel to review the regulatory Framework of the Tertiary Education Commission, Mauritius. This exercise is part of World Bank funded proposal.

As an Adviser of NAAC he has coordinated Assessment and Accreditation exercise of about 500 Higher Educational Institutions. He is also associated with large number of activities of NAAC including workshops, assessors training programs and surveys. In past 3 years he has coordinated as many as 4 Assessor Interaction Meetings [Training Programs] of NAAC and has been a resource person, facilitator in more than a dozen such programs.

Dr Patil was also convener of international conference on student participation hosted by NAAC and APQN jointly. As convener of OC he played key role in organization of APQN 2011 international conference hosted by NAAC at Bangalore.

He has visited Spain, France, Australia, New Zealand, Singapore, Malaysia, South Africa, Thailand, China, Hong Kong, Sri Lanka, Mauritius, Japan, Fiji and the United States of America on academic assignments and made presentations and/or conducted workshops in quality assurance as resource person. He has participated as international expert/observer in assessment exercise abroad and also provided orientation to many international delegates about accreditation process in India. Dr. Patil has also been a Moderator of APARNET, an online community of UNESCO Bangkok.

He has authored and edited publications on accreditation and quality assurance under the auspices of NAAC, APQN and other international fora. Apart from several papers, he has edited two prominent books-'Best practices in student feedback and Participation' and 'International perspectives on student participation in quality enhancement' on behalf of

NAAC and APQN. Among various recognitis, he is recipient of a prestigious international award by the Government of Australia titled- *Endeavor India Executive Award for year 2007.*

ԱՐԵՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Դիպլոմավորված մասնագետ է, տեխն.գ.թ. դոցենտ:

Ատենախոսության թեման է. <<Բնակչության զբաղվածության կառավարարումը ՀՀ-ում>>: Հետազոտությունների ոլորտը ՀՀ սոցիալական ոլորտն է՝ զբաղվածության կառավարում, գործազրկություն, աղքատության հաղթահարում, սոցիալական լարվածության մեղմում, բնեռացման հիմնախնդիրների ուսումնասիրություն, կրթության կառավարում և այլն:

Աշխատանքային տարիների ընթացքում աշխատել է որպես տնտեսագետ և դասախոս: Հոդվածների ոլորտը նույնն է, ինչ հետազոտություններինը:

Անդամակցում է <<Զարթոնք 89>> բարեգործական կազմակերպությանը, որի շահառուները խոցելի խմբերի երեխաներն են: Մասնակցել է մի շարք ծրագրային աշխատանքների:

Արևիկ Սարգսյան

Ա. Սարգսյանը ռադիոինժեների որակավորմամբ դիպլոմավորված մասնագետ է: Տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը ստացել է «Անտենաներ, գերբարձր հաճախականության սարքեր և տեխնոլոգիաներ» մասնագիտությամբ՝ «Երկհայելի սֆերիկ անտենաների ճառագայթման համակարգեր» թեմայով ատենախոսության պաշտպանության արդյունքում: Հետաքրքրությունների ոլորտներն են. ռադիոէլեկտրոնային համակարգերը, բիզնես-թրեյնինգներն ու խորհրդատվությունը/ կառավարման հարցերը/, մեծահասակների կրթության /անդրագոգիկայի/ և հարատև ուսումնառության հիմնախնդիրները: Հիմնական աշխատավայրը՝ ՀՊՃՀ /Պոլիտեխնիկ/ - դոցենտ, ԱՐԼԻԱՆ խորհրդատվական և թրեյնինգ ՍՊԸ - տնօրեն, մասնակցել է Համաշխարհային բանկի, USAID, UNDP, ETF, ՓՄՁ ԶԱԿ, ՄԿՈՒ ԶԱԿ, ՈՒԱԱԿ, Զբաղվածության գործակալություն և այլ ծրագրերի, ազգային փորձագետ և թրեյներ: Ունի ավելի քան 80 տպագիր աշխատանք, 4 դասագիրք և մենագրություն, 2 արտոնագիր անտենային

համակարգերի և մեծահասակների կրթության ոլորտներում: Դոցենտ է, ՀՀ ԿԳՆ կոլեգիայի անդամ է, «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» ՀԿ նախագահ է, ՀՀ ԿՁՊ/ՀՁՊ ՔՀՅ խորհրդի անդամ է: Մասնակցել է ավելի քան 20 միջազգային գիտաժողովների տարբեր երկրներում: Բոլորովին վերջերս արժանացել է ՀՀ վարչապետի «Լավագույն կին գործարար» մրցանակի /նորարար և նախաձեռնող - անվանակարգում/ :

ՀՌԻՓՍԻՄԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողուհի է (բակալավր):

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով Հյուսիսային համալսարան իրականացվող որակի արտաքին գնահատման փորձագիտական խմբի հնգօրյա այցի

03.12.2012 - 07.12.2012թ.

03.12.2012թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Փորձագիտական խմբի հանդիպում ՈԱԱԿ-ում	9.30	12.00	210 րոպե
2	Հանդիպում ռեկտորի հետ	13.00	13.30	30 րոպե
3	Ընդմիջում	13:45	14:45	60 րոպե
4	Ռեսուրսների դիտարկում	15:00	16:30	90 րոպե
	Լսարանային ֆոնդ			
	Լաբորատորիաներ և մասնագիտական կաբինետներ			
	Գրադարան			
	Մարզադահլիճներ և մարզադաշտեր			
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն	16:45	18.00	75 րոպե
6.	Փորձագիտական խմբի քննարկում	18.00	19.00	60 րոպե

04.12.2012թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Փորձագիտական խմբի հանդիպում	9:30	9:45	15 րոպե
2.	Հանդիպումինքնավերլուծությունը իրականացրած աշխատանքային խմբի հետ	9:45	11: 15	90 րոպե
3.	Դասալսում	9:30	10:50	80 րոպե
4.	Հանդիպում դասախոսների հետ /Փորձագետների առաջարկած ցուցակի համաձայն/	11.20	12.50	90 րոպե
5.	Հանդիպում ուսանողների հետ /Պատահական ընտրությամբ/	13:00	14:30	90 րոպե
6.	Ընդմիջում	14:35	15:35	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն	15:45	18.00	135 րոպե
8.	Փորձաքննության խմբի քննարկումներ	18.00	19:00	60 րոպե

05.12.2012թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Փորձագիտական խմբի հանդիպում	9:30	9:45	15 րոպե
2	Հանդիպում վարչական անձնակազմի հետ /կից ներկայացվում է ցուցակը/	9:45	11:15	90 րոպե
3	Հանդիպում վարչական անձնակազմի հետ /կից ներկայացվում է ցուցակը/	11:25	12:55	90 րոպե
4	Ընդմիջում	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	14:10	15:45	90 րոպե
6	Հանդիպում կրթության որակի ապահովման վարչության աշխատակիցների հետ	16:00	17:00	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն	17:00	18:00	60 րոպե
8	Փորձաքննության խմբի քննարկումներ	18.00	19:00	60 րոպե

06.12.2012թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Փորձագիտականխմբիհանդիպում	9:30	9:45	15րոպե
2	Փաստաթղթերիուսումնասիրություն /այց դեկանատներ/	9:45	11:15	90րոպե
3	Հանդիպումուսանողներիհետ	11:20	12:40	80րոպե
4	Ընդմիջում	13:00	14:00	60րոպե
5	Հանդիպում դասախոսների հետ /ըստ փորձագետների ընտրության/	14:15	15:45	90րոպե
6	Հանդիպում որակի ապահովման վարչության աշխատակիցների հետ	16:00	17:30	90 րոպե
7	Փորձագիտականխմբիքննարկումներ	18:00	19:00	60րոպե

07.12.2012թ.

		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Փորձագիտականխմբիհանդիպում	9:30	9:45	15րոպե
2	Հանդիպումռեկտորիհետ	10:00	11.00	60րոպե
3	Փաստաթղթերիուսումնասիրություն /այց ամբիոններ/	11:00	12:30	90րոպե
4	Ընդմիջում	13:00	14:00	60րոպե
5	Անհատականհանդիպումներ	14:30	16:30	120րոպե
6.	Փաստաթղթերիուսումնասիրություն	17:00	18:00	60րոպե
7.	Փորձագիտականխմբիքննարկումներ	18:00	19:00	60 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

I. Պահանջված լրացուցիչ փաստաթղթերի ցանկ՝ ըստ չափորոշիչների

I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

N	*Փաստաթուղթ*	*Ումից ստանալ*
1	ՄՈՒՀ-ի կանոնադրություն	3
2	Ուսանողների հետ կնքված պայմանագրերի նմուշներ	3
3	Ուսանողների կողմից դասախոսների գնահատման թերթիկի նմուշ	3
4	Ուսանողների և դասախոսների հետ անց կացրած ֆոկուս-խմբերի արձանագրություններ	3
5	Գիտխորհրդի և ռեկտորատի նիստերի արձանագրություններ, ուր կան ներքին շահակիցների կարիքների վերհանման դեպքեր	3
7	Շահակիցների ներգրավվածությունն արտացոլող տարաբնույթ հիմքեր. արձանագրություններ, հրապարակային ելույթներ, ԶԼՄ-ների նյութերի հավաքածու, գործատուների հարցումների արդյունքներ	3

II.ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

N	*Փաստաթուղթ*	*Ումից ստանալ*
1	Կառավարման մարմինների կանոնակարգ	2
2	Ավարտական քննությունների հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները	4
3	Կարճաժամկետ ծրագրի մոտ 70%-ը կատարված լինելու վերավերյալ փաստաթուղթ	3
4	ՄՈՒՀ-ում որոշումներ կայացնելու գործընթացում դասախոսների և ուսանողների նեգրավվածության բարձրացմանը վերաբերող հանձնարարական	2
5	ՄՈՒՀ-ում որոշումներ կայացնելու գործընթացում դասախոսների և ուսանողների նեգրավվածության աստիճանը բացահայտող հետազոտությունների արձանագրային բազա / Ֆոկուս խմբերի արձանագրություններ, հարցաթերթիկներ, հարակից փաստաթղթեր/	3
6	2011/2012 ուս. տարվա ընթացքում իրականացված մշտադիտարկման, ընթացիկ հարցումների և գնահատման արձանագրություններ	3
7	Որակի ապահովման մեթոդական ուղեցույց, Երևան, 2011	3
8	ՄԿԾ գնահատման հարցաշարեր, ֆոկուս խմբերի արձանագրություններ	3
12	ՄՈՒՀ-ի PR ծրագիրը	2
13	Պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման ծրագրեր, պլան	2

14	Ուսուցման գրաֆիկի փոփոխությունը արձանագրող փաստաթուղթ	2
15	Ռեկտորի հրապարակային որոշ ելույթներ, ուր տեղ են գտել ՄՈՒՀ-ի գործունեության ուսումնասիրության արդյունքները	3
16	Մշտադիտարկման մեթոդիկան ներկայացնող փաստաթուղթ է (Չափորոշիչ 2-Ե, էջ 26)	3
17	Կայքի այցելության վերաբերյալ տվյալներ	2
18	Դպրոցների և մարզային այցելությունների հանդիպումների մասնակիցների ցուցակները, երկու կողմերից:	3

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

1	Ուսանողների գիտելիքների գնահատման չափորոշիչներ՝ ըստ ՄՈՒՀ-ում առկա մասնագիտությունների	2
2	Ներքին և արտաքին շահակիցների կարիքները վեր հանելուն ուղղված հարցաթերթիկներ, այլ փաստաթղթեր	3
3	Սանկտ Պետերբուրգում մուտ-ի աշխատակցի և ուսանողի ուսանելու վերաբերյալ պայմանագիր	2
4	Դասավանդման և ուսումնառության մեթոդների ու մոտեցումների գնահատման հարցաթերթիկի օրինակ	2
5	8 համալսարանների հետ համաձայնագրեր բենչմարքինգի վերաբերյալ	2
6	ՌԻՄԽ նիստի արձանագրություն, ուր արտացոլված է ուսանողների ներկայությունը (էջ 34):	2
7	Ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, այլ ձեռնարկներ, որ պատրաստված են ՄՈՒՀ-ում	3
8	«Իրավագիտություն» ՌԻԱ-25 -ի գնահատման գրավոր աշխատանք	4
9	«Հայոց լեզու» ՌԻԱ-16 -ի գնահատման գրավոր հարցման օրինակ	4
10	«Հոգեբանություն» ՌԻԱ-10 ռեֆերատ	4
12	«T-EAST» ծրագիրը	2
13	Տվյալներ դասախոսների համատեղության վերաբերյալ, օրինակ այլ բուհերում	2
14	Դասավանդման և ուսումնառության մեթոդների ու մոտեցումների գնահատման հարցաթերթիկ - դասախոսի համար	3
15	Գիտական զեկույ պրոռեկտորի համար և գործընկերների համար նախատեսված հարցաթերթիկ /էջ 80/	3
16	Դասավանդողի գործունեության գնահատման մեթոդական ուղեցույց	3
17	Ուսանողների առաջարկով փոփոխված ՄԿՕ	4, 3
18	ՌԻՄԽ 2009 թ. Սեպտեմբերի 22-ի նիստի արձանագրություն	3
19	19.04.10 ՌԻՄԽ նիստի արձանագրություն և պրակտիկայի նոր	2

	պլաններով ՄԿԾ-ներ	

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

1	Սովորողների առաջադիմության ցուցանիշների համեմատական սանդղակ ըստ ուսումնական տարիների	2
2	Ուսանողների կրթական կարիքների վեր հանման հարցաթերթիկների նմուշներ	3
3	Ուսանողության համար վարչական մարմինների հասանելիության խնդրին նոր մոտեցման վերաբերյալ ռեկտորատի համապատասխան որոշում /որոշման նախագիծ/	2
4	Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի աշխատանքային պլան	2
5	Պրակտիկայի բաժնի պլաններ, պայմանագրեր հաստատությունների հետ	2
6	PR մենեջերի աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	2
7	Ամբիոնների գիտական աշխատանքների պլաններ	4
8	Ֆոկուս խմբերի արձանագրությունները	7
9	2008 թ-ի նոյեմբերի 17-ի և 2007թ-ի հուլիսի 20-ի նիստի արձանագրությունները	2
10	Ռեկտորատի հատուկ որոշումը խորհրդատվությունների ժամանակացույցի վերաբերյալ	2
12	Ուսումնամեթոդական խորհրդի 2011թ-ի դեկտեմբերի 12-ի նիստի արձանագրություն	2
13	Փաստաթղթեր բողոքարկումների հետ կապված	3
14	Դասախոսների գնահատման արդյունքներ	3
15	Հյուսիսային համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի 26.05.2010թ.նիստի արձանագրություն	2
16	Վարչական անձնակազմի կողմից ուսանողի խնդրի լուծման վերաբերյալ փաստաթուղթ	2
17	Ուսանողների թիվը ըստ ՄԿԾ-ների	2
18	ՈՒՄԽ արձանագրություններ (էջ 84)	2
19	Ռեկտորատի 2009 թ. ապրիլի 22 և մայիսի 5-ի նիստերի արանագրություններ	2
20	ՈՒՄԽ արձանագրություն համար 9, 26.05.10	2
21	2007 թ. հուլիսի 20, 2008 թ. նոյեմբերի 17-ի ՈՒՄԽ արձանագրություններ	2
23	ՇԿ կենտրոնի ռազմավարությունը	2
25	Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովի հարցման վերլուծություն	3
26	ՇԿ կենտրոնի շրջանավարտների հետ կապի ապահովման ընթացակարգ	2

V.ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

1	Ռեկտորատի 24.10.2011թ. նիստի արձանագրությունը	2
2	Ներկայացնել կադրերի պահանջարկի վերլուծությունը	2
3	ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի հեռացման ընթացակարգը	2
4	Վերապատրաստման ևատեստավորման կարգը	5,4
5	Թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ պաշտպանած դասախոսների անվանացանկը	5,4
6	«Լավագույն...» խրախուսման կոչումների հանձնման երևույթը փաստող լուսանկարներ	3,4,2
7	ՊԴ կազմի գիտաժողովների ժողովածուներում հրապարակված աշխատանքներ	4
9	Կադրերի ընտրության հետ կապված մրցույթների կազմակերպման ընթացակարգեր	ԻԿԽ, 3
10	Շուկայի վերլուծություն	2
12	Ամբիոններում կազմակերպվող սեմինարների ցանկը և ժամանակացույցը	4
13	Ռեկտորատի արձանագրություն, ուր անդրադարձ է կատարվել դասախոսի բնութագրերին	2
14	Դասախոսների վերապատրաստման կարգ	4,3
15	Սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականությունը և ընթացակարգը արտահայտող՝ ամբիոնների վարիչների աշխատանքային պլաններ, ամբիոնների նիստերի արձանագրություններ	4, ԻԿԽ
16	Վերապատրաստվածների ցուցակ	3,2
17	Վերապատրաստման փաթեթ	3,4
18	Ուսումնաօժանդակ կազմի ցուցակ	2
19	ՄՈՒՀ-ի ֆինանսական աջակցությամբ հրատարակված ՊԴ կազմի աշխատությունների ցանկը և դրանց նմուշները	2, 3,4
20	Աշխատուժի շուկայի վերլուծության վերաբերյալ նյութեր	2, 3, 10
21	Մշակված փաստաթղթեր, որոնցում ներկայացված են ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները՝ ըստ կոնկրետ ԿԾ-ի:	2,3,4
22	Դասախոսների ատեստավորման նոր կարգ	2,3,4
23	Հավելված 5գ-1-ում առկա սխեմայի շրջանակներում մշակված գնահատման թերթիկներ, գնահատման սանդղակ	2,3
24	Դասավանդողների կոմպետենցիաներին վերաբերող հարցերի քննարկման, դրանց իրականացմանը խոչընդոտող պատճառների վեր հանման, լուծման եղանակների մշակման խնդիրներին նվիրված նիստերի, կլոր սեղանների, գիտաժողովների ծրագրեր, արձանագրություններ	2,3,4
25	Փորձի փոխանակմանը միտված սեմինարների ծրագրեր, ներկայությունների թերթիկ	3,4
26	Ամբիոնների արձանագրություններ փոխադարձ	4,10

	դասալսումների վերաբերյալ	
27	Սկսնակ դասախոսների դասալսումների վերաբերյալ ամբիոնների քննարկումների արձանագրություններ	2,4,9
28	Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի հետ պայմանագիր, այլ փաստաթղթեր	2

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1	Արտասահմանյան գիտաժողովներին մասնակցած ՊԴ անձնակազմի հաշվետվությունները	2
2	Ամբիոնների հաշվետվություններ	4
3	Ամբիոնների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների հեռանկարային՝ 2009 2012թթ. պլանները	4
4	Ամբիոնների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների տարեկան պլանները՝ 2009, 2010, 2011թթ համար	4
5	Դասախոսների հաշվետվություններ	4
6	Գիտխորհրդի և ամբիոնների նիստերի արձանագրություններ՝ հավելված 6ա-2 ում նշված հանձնարարականների կատարման մասին	2, 3,4
7	Ամենամյա կոնֆերանսների թեմատիկան, հրատարակված նյութերը՝ ըստ տարիների	2, 3,4
8	Ամբիոնների միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններ	2, 3,4
9	Գիտական հետազոտությունների և կրթական ծրագրերի միջև կապի խնդիրներին նվիրված ամբիոնների և գիտխորհրդի նիստերի արձանագրություններ	2, 3,4
10	Ցանկում բերվածաշխատանքների ցանկում կան արդյոք այնպիսիք, որոնց հրատարակման հարցում ՄՈՒՀ-ը հեղինակներին աջակցություն է ցուցաբերել:	2,3,4
11	Կազմակերպված ուսանողական գիտաժողովների և միջոցառումների ցանկը և օրակարգը	3,4,7
12	Տարվեվերջի ամբիոնների հաշվետվությունները հետազոտական աշխատանքի կարճաժամկետ ծրագրերի կատարողականի վերաբերյալ	4
13	Դասախոսների հաշվետվություններ	4
14	Ուսանողների մասնակցությունը թումանյանագիտության զարգացման ուղղությամբ հաստատող թղթապանակներ	4
15	Գենդերային հետազոտություններին ուսանողների մասնակցությունը հաստատող թղթապանակներ	4

VII.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

1	ՄՈՒՀ-ի մասնաշենքի սեփականության և վարձակալության վկայականները	2
2	Ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման մասին	2

	ռեկտորատի նիստի արձանագրություն	
3	Համալսարանի կողմից ձեռք բերված մասնագիտական գրականության ցանկը՝ ըստ մասնագիտությունների	2,3
4	Մասնագիտական գրականության ձեռքբերման համար ամբիոնների կողմից ներկայացված պահանջագրերի օրինակներ	2,3
5	Էլեկտրոնային գրականության ցանկը ըստ մասնագիտությունների	2,3
6	Տվյալներ ուսանողների և դասախոսների գրադարան հաճախելիության մասին	2,3
7	Աուդիտորական եզրակացություն, համապատասխան հաշվետվություններ	2,3
8	Ուսումնավարժանքի արդյունքների վերլուծությունն ամփոփող փաստաթուղթ	2,3
9	Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների կամ աշխատակիցների նկատմամբ առանձնակի մոտեցումների կիրառման հետ կապված համապատասխան որոշումներ, արձանագրություններ	2,3,10
10	Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման նպատակով իրականացված Ֆոկուս խմբերի արձանագրությունները	2,3
11	Կադաստրային վկայականներ	2
12	Գրադարանի կատալոգը/ցանկը	2
13	Ուսումնական ձեռնարկների, մեթոդական ցուցումների օրինակներ	4
14	Եթե կան՝ բուժզրբույկներ	2
15	Ուսանող/ մ² հարաբերակցությունը	2
16	Լսարանների թիվը/ուսանողների քանակը, լսարանների բեռնվածությունը ցուցադրող այլ բնութագրեր, տվյալներ	2
18	Ֆինանսական միջոցների բաշխումը՝ արտահայտված տոկոսներով	2
19	Համալսարանի բիզնես-պլան	2
20	Ամբիոնների վարիչների զեկուցագրեր, պահանջագրեր	2
21	Հյուսիսային համալսարանի Քաղաքացիական Պաշտպանության գծագրեր	2
22	Հյուսիսային համալսարանի ՔՊ համադասողի հաշվետվությունները	2
23	Հավաքարարների աշխատանքի բաշխման հրահանգ, ցուցում	
26	Հարցումներ, բենչմարքինգի արդյունքներ	32

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1	Կառավարման մարմինների կանոնակարգ	1
2	Ուսանողների վկայականներ, շնորհակալագրեր, պատվոգրեր	1
3	Մուհ-ի ռեկտորի իրավասությունները և	1,2,3

	պարտականությունները սահմանող նորմատիվ փաստաթուղթ	
4	Հրատարակված հաշվետվություններ, որոնցում արտացոլված է հաշվետվությունների փոխգնահատման իրողությունը	2,3
5	Հաշվետվություններ կամ նիստերի արձանագրություններ, որոնցում արտացոլված են փաստեր՝ կապված ՁԼՄ-ներում հրապարակված նյութերի վերլուծության արդյունքում ՄՈԻՀ-ի գործունեության որոշակի ասպեկտների վերանայմանը և ըստ այդմ փոփոխությունների կատամանը:	2,3
6	Օրինաստեղծ գործունեության օրինակներ	2
7	Լրացուցիչ կրթության կենտրոնի գործունեության փաստեր և կարգեր, այլ փաստաթղթեր, լուսանկարներ	2

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

1	Դասախոսների վերապատրաստման վկայականներ	3
2	Արտաքին կապերի կանոնակարգի նախագիծ	2,3
3	Գիտամեթոդական ոլորտում համագործակցության շրջանակներում իրականացված գիտամեթոդական մշակումներ	2,3
4	Գիտաժողովների ծրագրեր և նյութերի ժողովածուներ, որոնց փոխադարձաբար մասնակցել են ՄՈԻՀ-ի և համագործակից համալսարանների ներկայացուցիչները	2,3
5	Մինչ այժմ վերապատրաստում անցած աշխատակազմի անդամների ցանկը և տվյալներ վերապատրաստման արդյունքների մասին	2,3
6	Օտար լեզվի դասընթացների ցանկը և ժամանակացույցը	4

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1	Աշխատանքային պայմանագրեր	2
2	Գործավարության համակարգի փոփոխությունը փաստող որևէ փաստաթուղթ	2
3	Վերապատրաստում անցած հանձնաժողովների անդամներից անկը, ներառյալ՝ գնահատման արդյունքները	3
4	Այլընտրանքային ներքին աուդիտորական մոտեցումներն ապահովելու նպատակով ձևավորված ուսանողական շարժման գործունեությանը վերաբերող տվյալներ /արձանագրություններ, որոշումներ և այլն/	2,3,7
5	"SMART" պարբերական	3
6	Որակի ապահովման վարչության կանոնադրություն	3
7	"Լրագրություն" մասնագիտության ուսանողների լրացրողական հետաքննության նյութեր	4,3

Պահանջվող փաստաթղթերի պայմանական համարակալում.

1. Ռեկտորին վերաբերող
2. Վարչական անձնակազմին վերաբերող
3. Ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբին վերաբերող
4. Ամբիոնների վարիչներին վերաբերող
5. Պրոֆեսորադասախոսական կազմին վերաբերող
6. Ուսանողության ներկայացուցիչներին վերաբերող
7. Ուսանողական խորհուրդին վերաբերող
8. Ռեսուրսների դիտարկումներին վերաբերվող (լսարանային ֆոնդ, ուսումնագիտական լաբորատորիաներ և մասնագիտական կաբինետներ, գրադարաններ և ընթերցասրահներ, մարզադահլիճներ և մարզադաշտեր)
9. Դասալսումներին վերաբերող
10. Դեկանատներում փաստաթղթերի ուսումնասիրությանը վերաբերող
11. Ամբիոններին և այլ կառուցվածքային ստորաբաժանումներին վերաբերող

II. Համալսարանի համապատասխան ստորաբաժանումներում ուսումնասիրվել են.

1. Մասնագիտությունների ուսումնական պլաններ
2. Ուսումնական գործընթացի գրաֆիկներ
3. Առարկայական ծրագրեր
4. Կուրսային աշխատանքներ
5. Դիպլոմային աշխատանքներ
6. Քննական տոմսեր
7. Ամբիոնների նիստերի արձանագրություններ
8. Պետական քննական հանձնաժողովի կարծիքների փաստաթղթեր
9. Ամփոփաթերթեր

10. ՈՒսանողների հաճախումների գրանցման մատյաններ

11. Դասացուցակներ

12. Դասախոսական կազմի աշխատանքային պլաններ

13. Ստուգաթղթային և քննական տեղեկագրեր և այլն

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՅՑԵՐԸ

1. Գրադարան և ընթերցասրահ
2. Լսարաններ
3. <<Վերնատուն>> թումանյանական կենտրոն
4. Լաբորատորիաներ և մասնագիտական կաբինետներ
5. Մարզադահլիճ և մարզադաշտ
6. Դեկանատներ
7. Ամբիոններ
8. Ուսումնամեթոդական վարչություն
9. Որակի ապահովման վարչություն
10. Դահլիճ
11. Համակարգչային լսարաններ